№ 2 (190) XVIII ՏԱՐԻ ՓԵՏՐԻՎԱՐ 1908

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՓՈԹՈՐԻԿԻՑ ԱՌԱՋ

Անշուշտ, պատերազմի անյագուրդ Մոլոքը դեռ նոր բանոր զոհեր է պահանջում... Մի տեղ զսպուած հասարակական կարծիքի ուժգին ճնշման տակ՝ նա անմիջապէս մի ուրիշ տեղ է հրապարակ գալիս իր բորբոքուած ախորժակներով։ Մարոկկոյից յետոյ — մերձաւոր Արևելքը... Մի ռումբ պայթեց օրը ցերեկով մի մեծ պետութեան սահմաններում և վայրկենաբար մթնեցրեց միջազգային քաղաքական հորիզոնը։ Դա Աւստրօ-Ունգարիայի արտաքին գործերի մինիստր Էրենտալի ճառն էր, արտասանուած ունգարական պատգամաւորութեան առջև։ Մինիստրը ծանուցեց ի լուր ամբողջ գիւանագիտական աշխարհի, որ աւստրօ-ունգարական կառավարութիւնը արդէն համաձայնութիւն է ստացել սուլթանից՝ երկաթուղու գիծ անցկացնելու Մակեդոնիայի „նովի բազար" կոչուած սանջակում, միացնելու համար Բոսնիան Մակեդոնիայի հետ։

Այդ ծանուցումն էր, որ առաջ բերեց մի անսովոր իրականացում, մասնաւորապէս Ռուսաստանում։ Մամուլը սկսեց ճչալ ու հաւա՞ր կանչել

—„Էրենտալի ճառը մի պրովոկացիա է Ռուսաստանին ուղղուած"։

—„Միւրցտեգի համաձայնութիւնը այլևս վերջացած է, Մակեդոնիայի statu quo-ն խախտուած"։

—„Աւստրիան ու Գերմանիան գաղտնի համաձայնութեան են եկել՝ սուլթանից առնելու այդ մեծ կոնցէսսիան և Մակեդոնիայի բախտը տնօրինելու"... Եւ այլն և այլն։

„Նովոյէ Վրէմիան կատաղութեան փրփուրը բերանին՝ կոկորդիլոսի արցունքներ թափեց համացեղակից Մակեդոնիայի վիճակի առթիւ.

—„Բ. Դուռը գաղտնի դաշնագիր է կապել Աւստրիայի հետ, երկաթուղու գործը զիջում է նրան, որպէսզի անխախտ պահպանէ իրերի վիճակը Մակեդոնիայում, որպէսզի թաղէ մակեդոնական հարցը։ Սուլթանը ծախում է Մակեդոնիան Աւստրիային, բայց սլավոնները այդ չեն թոյլ տայ"...

Այսպիսի սպառնական շեշտեր լսեցին Նէվայի ափերից, և միաժամանակ ազդարարեց որ ռուսաց զօրքը Կովկասի մէջ արդէն իսկ շարժման մէջ է դրուում և որ պատերազմական պատրաստութիւններ են տեսնւում նաև Էրզրումում...

Եւ ապա ամեն ինչ լռեց։ Ի՞նչ էր այս։ Արդեօք դիւանագիտական մի սոսկ միջադէ՞պ... Թէ՞ մի ծանրակշիռ անցք՝ որ յղի է արիւնոտ անակնկալներով... Այդ ցոյց կը տայ թերևս մօտիկ ապագան։ Յամենայն դէպս, ճշմարտութեան մեծ բաժինը կայ ռուս մամուլի ահակոչնակ-հաւարի մէջ։ Աւստրիական նոր նախագիծը —որքան էլ մինիստր Էրենտալ հաւատացնէ նրա „զուտ տնտեսական" բնոյթի մասին—կոչուած է ահագին յեղաշրջում առաջ բերելու Բալկանեան ազգերի ճակատագրերի մէջ։ Բոսնիան կապուած Մակեդոնիայի հետ, երկաթուղային ուղղակի հաղորդակցութիւն Վիեննայի ու Սալոնիկի միջև—դա հռչակաւոր „Drang nach Osten-ի իրագործումն է, դա պանգերմանիզմի յաղթական մուտքն է Յաճկաստանի մէջ և աւստրօ-գերմանական ազդեցութեան հաստատումն է դա՝ Բալկաններում... Ի վնաս Ռուսաստանի, որի աւանդական ձգտումն էր՝ պահել այդ ցեղակից երկրները իր „հայրական հովանաւորութեան" տակ։

Աւստրօ-ունգարական նոր երկաթուղին բացարձակապէս ռազմագիտական նպատակ ունի։ „Նովի բազար" սանջակը (սերպ-մակեդոնական) որի միջից պիտի անցնի նա—վաղ թէ ուշ կը ձուլուի Բոսնիայի հետ, Սերբիան այդպիսով կը բաժանուի Մոնտենեգրոյից, Ալբանիան կընկնի աւստրօ-ունգարական ազդեցութեան շրջանը, ապա—որ գլխաւորն է—Սալոնիկը, Մակեդոնիայի այդ կարևորագոյն ծովեզերեայ կէտը, նոյնպէս ժամանակի ընթացքում կուլ կը գնայ հաբսբուրգեան տիրապետութեան ախորժակներին... Էլ մնաս բարով Մակեդոնիայի աւտոնոմիա...

Բոլոր պետութիւնները—անգամ դաշնակից Իտալիան՝ իրենց դժգոհութիւնը յայտնեցին աւստրիական նախագծի առթիւ, թէև նա վաղուց սպասելի էր և նոյնիսկ թոյլատրուած Բերլինի դաշնագրով... Ինչո՞ւ հէնց այժմ Աւստրիան նիւթեց այդ վտանգաւոր խաղը,—այժմ, երբ նա կապուած է Ռուսաստանի հետ Միւրցտեգի յայտնի համաձայնութեամբ, որ պահանջում է, անխախտ պահել statu-quo-ն (իրերի ներկայ վիճակը) Բալկանեան թերակղզու վրայ... Երկաթուղու նախագիծը գալիս է պարզապէս խախտելու

այն և միանգամայն իդեալ հանելու մակեդոնական բէֆորմների գործը...

Բոլոր պետութիւնները դժգոհ են, բացի ի հարկէ, Գերմանիայից, որի հրամանատարները վաղուց փափագում են այդպիսի մի նախագծի իրականացման։ Օգտուելով իր դաշնակցի նուաճումներից՝ Վիլհելմ II դիւրութեամբ առաջ կը մղէ գերմանական ազդեցութիւնը դէպի Թիւրքիա, դէպի Փոքր-Ասիայի սիրտը։

Ինչպէ՞ս չը փոթորկւի 8 տարի պետութիւնը՝ թշնամիների այդքան հոյակապ մի խաղի հանդէպ... Նրա կատաղութեան շանթերը գնում են դէպի Վիեննա և միանգամայն դէպի Պոլիս... Նա չի ներում մանաւանդ սուլթանին։ Ինչպէ՞ս է, որ այդ վերջինը 30 տարի շարունակ յամառութեամբ դիմադրելուց յետոյ աստրիական նախագծի իրագործման,— այժմ տալիս է իր համաձայնութիւնը։ Ի՞նչ հանելուկ է այս։ Ո՞վ է ներշնչում նրան հակառուսական այդ դաւերը...

Եւ, իրաք, մի խոշոր հանելուկ կայ այդտեղ։ Թիւրք կառավարութեան ամբարտաւանութիւնն ու sans-gêne-ը հասել են անհաւատալի չափերի։ Նա վերստին և բացարձակ ցինիկութեամբ հեգնում է մեծ պետութիւններին, և ջուրն է գցում մակեդոնական բէֆորմները։ Նա պահանջում է, որ Մակեդոնիայի եւրոպական ագենտները այսուհետև ֆէս հագնին ու մտնեն թիւրքական ծառայութեան մէջ։ Նա միւս կողմից նիւթում է վտանգալի ընդհարումներ Պարսկաստանի հետ, աւերածներ ու նուաճումներ է անում Ռուսաստանի ազդեցութեան ենթակայ շրջաններում, իմանալով հանդերձ, որ կարող է հետևել անգլո-ռուսական կամ սոսկ ռուսական միջամտութիւն... սուլթան Համիդի կառավարութիւնը բարդութիւններից չի վախենում։ Մի գաղտնի ոյժ մղում է նրան դէպի խիզախ ու արիւնալի արկածներ... Ո՞վ է այդ ոյժը, եթէ ոչ Վիլհելմ փադիշահը...

Վառօդի հոտ է փչում ամբողջ մերձաւոր Արևելքից... Տաճկաստանը լրջօրէն պատրաստւում է մեծ պատերազմի, նա ունի արդէն —Il giornale d'Italia-ի իրազեկ թղթակցի վկայութեամբ—նա ունի այսօր զէնքի տակ քառորդ միլիոն զօրք։ Պատերազմի պատրաստութիւններ է տեսնում և Ռուսաստանը, որ մի օր, անտարակոյս, պիտի անէ Կարսից իր փափագած թռիչքը Էրզրումի ուղղութեամբ։ Պատրաստւում է և Բուլգարիան, որի նորակազմ ռազմավարական մինիստրութիւնը յայտարարեց արդէն ձեռնհաս ներկայացուցիչի բերանով, որ եռանդուն պաշտպան պիտի կանգնէ Մակեդոնիայի հարստահարուած բուլգարութեան։

Ամենուրեք՝ Բալկաններում, եւրոպական և ասիական Թիւրքիայում ու Պարսկաստանում ստեղծուել է մի ծանր ու լարուած մթնոլորտ, որ ամեն վայրկեան կարող է պայթել զարհուրելի փոթորիկներով։

ԿԵՆՏՐՕՆԱՑՈՒՄ ԵՒ ԱՊԱԿԵՆՏՐՕՆԱՑՈՒՄ

Նման են երկու բռնաւոր կառավարութիւնները իրենց ճնշման մեթոդի մէջ։ Ռուսաստան և Գերմանիա —երկուսն էլ հիմնուած կենտրօնացման սկզբունքի վրայ —մրցում են իրար հետ դրակօնական բռնութիւնների ասպարէզում։ Դժուար է ասել, ո՞րն է երկսից ազգահալած, աւելի ատող „այլազգիների իրաւունքների“։ Ազգային քաղաքականութեան մէջ մէկ է երկսի նշանաբանը, —ճանաչել օտար ազգաբնակութիւնները որպէս ամենավտանգաւոր թշնամի և խեղդել, դուրս մղել նրանց՝ բոլոր հնարաւոր միջոցներով։

Ուշք դարձրէք. երկու պետութիւնների մտահոգութեան գլխաւոր առարկան կարծես այդ չարաբախտ օտար ազգերն են, „հարազատ վտանգը“ ասես նրանց համար գոյութիւն չունի։ Որքան էլ բուն, ուղղափառութիւնը ի դէմս պրոլետարիատի, մանր-բուրժուազիայի և գիւղացիութեան համակւի՝ „կրամօլայով“, յեղափոխական „համաճարակով“, — կառավարութիւնը, այնուամենայնիւ, բուն „կրամօլան“ տեսնում է կամ թէ տեսնել է ձևացնում օտար տարրերի, այլազգիների մէջ։ Այդպէս է գոռում միշտ և ինքնակալութեան պաշտպան մամուլը և Դումայի աջակողմը։ Լեհը, հրէան, հայը, վրացին—ահա՛ իսկական թշնամիները, ռուս պետութիւնը քանդողները։ Նոյնը Գերմանիայում։ Թող սօցիալ-դէմոկրատ ընտրողների թիւը հասնի ամբողջ չորս միլիոնի, թող այդ թիւը crescendo աճի, թող բանւորական սենտիկատները և կօոպերատիվ միութիւնները հոյակապ ցանցով պատեն երկիրը, միշտ աւելի և աւելի յեղափոխականանալով, դասակարգային հողի վրայ կանգնելով, դէպի հՕհենցօլլերնեան մայրաքաղաք Բերլինը դառնայ հետզհետէ սօցիալիստական մի ամրոց —այդ բոլոր ահարկու փաստերը չեն, կարծես, որ խռովում են Վիլհելմների և Բիւլօվների հանգստութիւնը, ո՛չ,— մի ուրիշ վտանգ կայ, մի այլ ուրական, որի հանդէպ Գերմանիայի հրամանատարները կրակ ու բոց են դառնում, թոյն ու ատելութիւն... Դա լեհական հարցի ուրականն է։

Արդեօք ազգատեաց բիւրօկրատները Ռուսաստանում և Գերմանիայում յիրաւի՞ անկեղծ հաւատում են, որ այլազգի տարրերը տոգորուած են անջատական ձգտումներով և հետևապէս լուրջ սպառնալիք են պետութեան ամբողջութեան համար, թէ՞ միայն ուզում են դիվերսիօն անել, ուզում են զարնել հարազատ ժողովրդի ազգայնական փափուկ լարերին, զբաղեցնել նրան այլազգիների երևակայական շահատակութիւններով, շեղել այդպիսով նրա ուշադրութիւնը ներքին հրատապ սօցիալական հարցից,—որ իրօք ամենահաւոր ուրականն է կիսաֆէօդալական բիւրօկրատիայի համար—և հաշտեցնել բոլոր հակամարտ կուսակցութիւնները ազգայնական խնդրի շուրջը... Նոյն հինաւուրց divide et impera-ի մեթոդն է դա. թշնամութիւն սերմանել հարազատի և օտարի միջև, բաժանել՝ տիրելու համար... Երբէք յարատև աջողութեամբ չը պսակւեց նա Գերմանիայում կամ Ռուսաստանում, երբէք արւեստական գրգռումները և բացառիկ օրէնքները „օտարի“ դէմ՝ չը նպաստեցին կենտրօնական կառավարութիւնների ծրագիրներին—և այ-

նուամենայնիւ մի զարմանալի կամակորութեամբ նրանք շարունակում են այդ ճանապարհով, միշտ աւելի դժնդակութիւն հաղորդելով այդ բացառիկ օրէնքներին։ Երկա՜ր ժամանակ կիսաֆեդերատիվ Գերմանիայում Բերլինի կենտրոնական կառավարութիւնը, իբրև նուաճուած երկրների (Էլզասի, Լեհաստանի, Շլիզվիգ-Հոլշտայնի) միահեծան տնօրինող՝ ծանրացաւ բոլոր թափով այդ հպատակ ժողովուրդների վրայ և ի՞նչ շահեց, բացի թունոտ ատելութիւնից։

Եւ ոչ մի տեղ այդ ատելութիւնը չի արծարծուել այնքան ընդարձակ չափերով, ինչպէս Պոզնանում ու Վերին Սիլիզիայում, ուր կենտրոնացած է լեհ ազգութեան մի սաւար մասը։ Պրուսացման վայրենի գաղափարը գործադրեց այդ բոլոր quasi—օրինաւոր միջոցները՝ ամբողջ մի քանի միլիոն ազգաբնակութիւնը զրկելու համար իր ազգային կերպարանքից։ Արշաւանք լեզուի դէմ, մամուլի ու գրականութեան դէմ, կրօնի դէմ, բուռն ու սիստեմատիկ արշաւանք ամբողջ լեհական կուլտուրայի դէմ։ Փաստերը իրենց վայրենութեամբ աշխարհ էին դղրդեցնում, ամեն տեղ բողոքներու ցոյցեր յարուցանում—ոչի՞նչ, մի անխռով ցենիզմով կենտրոնական կառավարութիւնը առաջ էր տանում իր տխուր գործը։ Եւ այդ բոլոր հարուածները ազգայնութեան ու կուլտուրայի դէմ ո՞ միայն նը-պատակին չէին հասնում, այլ ուղղակի հակադիր հետևանքներ էին առաջ բերում։ Լեհական հայրենասիրութիւնը աճում էր, ազգային ամբողջութեան գիտակցութիւնը միշտ աւելի շեշտւում բոլոր դասակարգերի մէջ և միևնոյն ժամանակ բոլորն էլ համակւում էին կատաղի ատելութեամբ դէպի իշխողը։ Գրական, տնտեսական և ընդհանուր լեհ-կուլտուրական առաջադիմութիւնը կանգ չէր առնում ազգային փորձութիւններից յետոյ, փոխանակ նահանջելու գերման տարրի գրոհի առջև արևելեան Պրուսիայում, ուր վաղուց ի վեր կառավարութիւնը իր գաղթային յանձնաժողովներով նիւթական մեծ զոհողութիւններով ձգտում է գրաւել հողը իր „հարազատ“, իր ցեղակից հպատակների համար,—լեհութիւնը, ընդհակառակը, աւելի և աւելի ամրապնդում էր իր դիրքերը... Այդ է, որ մղեց պրուսական վանդալ բիւրօկրատիային դէպի մի անսովոր, բացառիկ քայլ, որ արդէն խարանուեց ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան կողմից. մեր խօսքը Բիւլովի վերջի օրինագծի մասին է, որ պահանջում էր առանց այլևայլութեան վերցնել լեհերի սեփականութիւն — հողերը և տալ արիւնակից գերմանացիներին։

Ոչ մի դրակօնական միջոցի առջև չի կանգ առնում իր ուժով ու մեծութեամբ այն արբած բռնաւորը և նա դեռ կը յղանայ նոր-նոր օրինագծեր՝ „լեհական ամբարտաւանութիւնը“ ջախջախելու համար։ Զոհերն էլ, սակայն, յաղթելու բնաւ տրամադիր չեն և ազգային հզօր նախաձեռնութեամբ ու արիութեամբ, նրանք ընդունակ կը լինին դիմագրաւելու փորձութիւններին... Սահմանադրական բռնապետութիւնը կը յամառի իր ընթացքի մէջ և կռիւը կը շարունակւի։ Եւ մենք պարբերաբար առիթ կունենանք դիտելու բարբարոսութեան յարձակողական վերադարձը մի երկրում, որ 40 տարուց ի վեր վայելում է ընդհանուր ընտրողական իրաւունք ու պարլամենտական կեանք, ուր սոցիալ-դէմօկրատիան գրաւել է բազմաթիւ արդիւնաբերական կենտրոններ և հաշւում է երեք ու կէս միլիոն ընտրողներ!...

Ո՞րպիսի տխուր ու վհատեցուցիչ տեսարան...

Եթէ մեր սիրտը լցւում է ուրախութեամբ ի տես այն հզօր ազգային համերաշխութեան, որով լեհերը երկար ժամանակակից ի վեր պահպանում են իրենց ազգային կուլտուրան գիշատիչ բռնաւորների դէմ, ապա միւս կողմից մենք տխրութեամբ գիտակցում ենք, որ պմեն մի հարուած լեհ ազգութեան դէմ, պանգերմանիզմի կամ ցարիզմի կողմից, մի քայլ յետ է քշում այդ ազգութիւնը սոցիալական էվոլիւցիայի ճանապարհի վրայ։ Ազգային խիստ արծարծուած համերաշխութիւնը մի յայտնի չափով թուլացնում է դասակարգային հակամարտութիւնն ու կռիւը, որ գերագոյն միջոցն է աշխատաւոր ընդհանրութեան ձեռքում՝ իրագործելու իր սոցիալիստական իդէալները։ Կայ մի աւելի ծանրակշիռ հանգամանք։ Ինքը սոցիալիստական մտաւորութիւնը ևս այդպիսի համազգային փորձութիւնների ժամանակ՝ ստիպուած է առժամապէս ծալլել դասակարգային կռւի աւետարանը և միանալով բոլոր միւս, բուրժուազական տարրերի հետ՝ պաշտպանել համազգային վտանգուած իրաւունքները։ Այդպէս է մեզ մօտ Կովկասում, այդպէս եղել է և միշտ էլ կը լինի Լեհաստանում, ինչպէս բոլոր ուրիշ երկրներում։ Ազգային ճնշումները, տիրող ազգութեան թէկուզ և պաշտօնական ներկայացուցիչների ոտնձգութիւնները յաճախ պաղութիւն են առաջացնում տիրող ու հպատակ ազգութիւնների հարստահարուած դասակարգերի միջև, —մի ողբալի իրողութիւն՝ որ ամեն տեղ ցոյց է տալիս իր քայքայիչ ներգործութիւնը։

II

Կան թէօրետիկոսներ, նոյնիսկ ռամկավար ու սոցիալիստական շարքերում, որոնք հռչակում են պետութեան կենտրօնացումը, իբրև բանաւոր, առաջադէմ, օգտակար մի սկզբունք։ Այդպէս է մտածում Ռուսաստանի սոցիալ-դէմօկրատիան, որ և հակառակ է ապակենտրօնացման, ֆէդերացիայի ու աւտոնօմիայի՝ մանաւանդ ի դէմս „բօլշեվիկների“։

Սակայն հէնց նոյն կենտրօնացման սկզբունքից են առաջանում վերը արձանագրած հասարակական չարիքները։ Բաւական արդէն արծարծուած է այս մեծ խնդիրը, նոյնիսկ մեր դաշնակցական գրականութեան մէջ, այնուամենայնիւ, որոշ գաղափարներ, որոշ ծանրակշիռ սկզբունքներ պէտք է միշտ շեշտուին, ամեն առիթով։ Ինչո՞ւ չենք տեսնում լեհական խլրտումներ Աւստրիայում։ Ինչո՞ւ չեն լոյս ընկնում հակալեհական օրինագծեր Գալիցիայի համար։ Որովհետև աւստրիական Լեհաստանը պատեհ ժամանակին բախտ է ունեցել փոքր ինչ ապակենտրօնանալու և ստացել է մի յայտնի ինքնավարութիւն։ Բտէ՛ք Գալիցիայի խորքերը, անցէք Կրակովից դէպի Լվով, դէպի Շերնովից։ Դուք ձեզ զգում էք լեհական թագաւորութեան մէջ։ Համեմատեցէք Պոզնանի հետ... Այնտեղ լեհ մանուկներին աղօթելն ան-

գամ մայրենի լեզուով արգելում են, իսկ այստեղ, Գալիցիայում, հասարակական բոլոր հիմնարկութիւնների մէջ, դպրոցներում ու համալսարաններում, փօստ ու հեռագրատներում, դատարաններում և այլն — տիրապետող լեզուն Լեհերէնն է։

Եւ տեղիք չը կայ քաղաքական դժգոհութիւնների ու խլրտումների։ Մի ժողովուրդ ամփոփած իր ցեղագրական պայմանների մէջ՝ ազատ, անարգել (համեմատաբար) զարգացնում է իր կուլտուրան։ Եւ հաբսբուրգեան գահը չի տուժում նրանից, որ Գալիցիայի վրայ չի սաւառնում պանգերմանիզմի ուրուականը... Համեմատեցէք միւս կողմից Աւստրիան ու Գերմանիան։ Որքա՜ն տարբերութիւն՝ ընդհանուր քաղաքակրթական տեսակէտից։ Աւստրիան Ռուսաստանից շատ էլ հեռու չի գնացել, եթէ չը հաշուենք „ընդհանուր ընտրողական իրաւունքը“, որ միայն երէկ նուաճեց։ Իսկ Գերմանիան — վաղուց առաջնակարգ, կուլտուրական մի երկիր... Եւ սակայն, այնտեղ են մղում զուտ համեմատական հալածանքները հպատակ ազգերի դէմ... Այս փոքրիկ ու թոուցիկ զուգադրութիւնը ինքնին մի պերճախօս լուսաբանումն է կենտրօնացման ու ապակենտրօնացման սկզբունքների,—մէկի խոշոր առաւելութիւնների, միւսի խոշոր պատուհասների։

***

Ռուսաստանի սօցիալ-դէմօկրատները մերժելով ապակենտրօնացման սկզբունքը, պատճառաբանում են, որ ժամանակակից տնտեսական զարգացումը, կապիտալիզմը անխուսափելի կերպով առաջնորդում է դէպի պետական հաստատութիւնների կենտրօնացումն, որ կենտրօնական պետութիւնների մէջ հասարակական առաջադիմութիւնը և մասնաւորապէս սօցիալական շարժումը աւելի արագ տեմպով կ'երթայ, որ ֆէտերալիզմն ու աւտօնօմիան, կտրատելով ընդարձակ երկիրը մանր-մունը երկիրների, ազգութիւնների՝ կտրատում են և պրօլետարիատը, բաժան-բաժան են անում ընդհանուր բանւորութեան ուժերը և այդպիսով իբր թէ թուլացնում են սօցիալիստական շարժումը։ Ռուսական սօցդէմօկրատները օգտակար են գտնում պետական կենտրօնացումը — ի հարկէ ո՛չ միապետական հողի վրայ — նոյնիսկ այնպիսի երկրներում, ինչպէս Ռուսաստանը և Աւստրիան։ Մէկ բարձրագոյն կենտրօնական պարլամենտ, մէկ օրէնսդիր մարմին՝ այնքան խայտաբղէտ և բազմալեզու ժողովուրդների համար, այնքա՜ն տարբեր բարքերով, պատմական աւանդութիւններով, կուլտուրական կերպարանքով...

Անտարակոյս, Ռուսաստանի սօցիալ-դէմօկրատիայի այդ ըմբռնումը եզակի է ամբողջ սօցիալիստական աշխարհում։ Նա հակասում է և օբիեկտիվ էւօլիւցիային (իրերի բնական ընթացքին) և սուբիեկտիվ ռամկավարական մտածողութեան։

Աշխարհը չի գնում դէպի կենտրօնացում, ընդհակառակը։ Ամեն տեղ մենք տեսնում ենք կենտրօնախոյս ձգտումներ։ Ամեն տեղ, երկրագնդի բոլոր ծայրերում, ուր քովքովի ապրում են տարբեր ազգութիւններ գերիշխանութեան ու հպատակութեան պայմաններում — մենք տեսնում ենք հպատակ ազգերի մէջ ձգտումն դէպի ապակենտրօնացում, դէպի որոշ անկախութիւն։ Նա շեշտւում է թէ յետամնաց երկրներում — Թիւրքիա, Հնդկաստան, Եգիպտոս, Ռուսաստան, Աւստրօ-Ունգարիա և այլն — և թէ առաջաւոր պետութիւնների մէջ — Անգլիա, Ֆրանսիա, Շվէյցարիա, Գերմանիա (լեհերը)։ Անգամ միապաղաղ հանրապետական Ֆրանսիայում, ուր չը կան տարբեր ազգութիւններ, որոշ գաւառական համայնքներ յաճախ դժգոհութեան ու ըմբոստացման նշաններ են ցոյց տալիս, որովհետև նրանց օգտակար նախաձեռնութիւնները, խեղդւում են կենտրօնից (Պարիզից) արձակւած բիւրօկրատական հրամաններով։ Շվէյցարիայի յետին ամենափոքրիկ կանտոններն անգամ այսօր կատաղի նախանձախնդրութեամբ պաշտպանում են իրենց անկախութիւնը, ապակենտրօնացումը։ Ժամանակակից ռամկավարական միտքը ամեն տեղ մէկ նշանաբան է հնչեցնում՝ „ֆէդէրացիա կամ աւտօնօմիա“։

„Պատմական արգումենտը“ կարևոր չէ։ Որոշ հաստատութիւն՝ պատմութեան որոշ, նախնական շրջանում կարող է լինել անխուսափելի ու գերազանցապէս օգտակար, իսկ յետագայ շրջաններում կարող է դառնալ վնասակար։ Ճիշտ է, անշուշտ, որ հինաւուրց ժամանակներում, նոյնիսկ միջին դարերում, երբ իշխում էր համատարած պարտիկուլարիզմը (մարդկութեան ցիրուցան մի վիճակ), երբ մարդկային համախմբումներ ապրում էին բաժան-բաժան հսկայական տարածութիւնների վրայ առանց հզօր ու շաղկապող օղակների, առանց օրինաւոր կառավարութեան, մասնւած ֆէօդալների ու նրանց բիւրաւոր սպասաւորների անսահման կամայականութեան — անշուշտ, ասում ենք, այդպիսի մի վիճակում կատարեալ բարեբախտութիւն էր կենտրօնական ուժեղ ու օրինաւոր իշխանութեան հաստատելու այդպիսի մի վիճակում „պրօգրէս“ էր, առաջադիմական մի երևոյթ էր նոյնիսկ բացարձակ, միահեծան բռնապետութեան հաստատումը, որպիսին էր Ֆրանսիան Լուտովիկոս XIV-ի օրով... Որովհետև, որքան էլ նա ճնշէր իր մեծածաւալ բիւրօկրատիայի, իր սահմանած տուրքերի միջոցով, այնուամենայնիւ խիստ զգալի ապահովութիւն էր մտցնում երկրի մէջ իր սահմանած միակերպ օրէնքներով ու կանոնադրութիւններով. բացի այդ, բռնապետական կենտրօնը որոշ չափով հոգում էր և ժողովուրդների նիւթական ու հոգևոր առաջադիմութեան մասին, և այլն և այլն։ Կենտրօնացումը այն քաօսային, անիշխանական ժամանակներում, պետական ամենաուժեղ կենտրօնացումը եղել է պօստուլատ, եղել է անպայման պահանջ սուբիեկտիվ մտքի. բայց նա պահանջ է եղել և օբիեկտիվ իրականութեան, նա եղել է անխուսափելի պօստուլատ նաև իրերի բնական ընթացքի, տնտեսական էւօլիւցիայի, քանի որ աւատական բաժան-բաժանութեան ու քաօսի մէջ տնտեսութիւնն ամենուրեք կաշկանդւած էր, մեծ մասամբ իր բնական շրջանում, առևտուրը խեղդւած վաճառականական կապիտալը մասնւած անշարժութեան ու ամլութեան, շնորհիւ հաղորդակցութեան ճանապարհների բացակայութեան և մշտնջենական աւազակութիւնների։ Մարդկային տնտեսութիւնը, ինչպէս և ընդհանուր քաղաքակրթութիւնը սիրում են շարժւել լայն ու արձակ հո-

րիզոններում, և կանոնաւորութեան ու ապահովութեան մէջ...

Այո, պետական կենտրոնացումը մի վաստակ էր, առաջադիմական մի գործօն էր այն մռայլ ժամանակներում։ Բայց եկան նոր պատմական շրջաններ, երբ այդ կենտրոնացումը ոչ միայն աւելորդ դարձաւ, այլ և խոչընդոտ ազգերի, հասարակութիւնների նորմալ զարգացման համար։ Նրա բացասական ոյժը արտայայտուեց ահարկու ցնցումներով 18-րդ դարավերջի անգլո-ամերիկեան ընդհարումի մէջ։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, որ մինչ այն իբրև սոսկ գաղութ ստորադրուած էին Անգլիայի կենտրոնական ու քմահաճ բէժիմին—մի հոյակապ ըմբոստացումով թօթափեցին այդ կենտրոնացման լուծը, և դառնալով միանգամայն անկախ՝ տուին աշխարհին մի փայլուն ու հրահանգիչ օրինակ ֆէդերատիվ կազմակերպութեան, կապուեցին իրար հետ դաշնակցական հանրապետական կապերով։ Ապակենտրոնացումը այնուհետև դարձաւ նոր աշխարհի քաղաքական դաւանանքը և մինչև օրս էլ Միացեալ Նահանգների քաղաքացիները մնում են հաւատարիմ այդ դաւանանքին։ Ինքը Բրիտանիան, խրատուած դառն փորձութիւններից, պինդ գրկեց այնուհետև ապակենտրոնացման աւետարանը և մենք այսօր տեսնում ենք նրա ոյժը հէնց այդ մեծ սկզբունքի կիրառութեան մէջ, որի շնորհիւ Աւստրալիայի, Կանադայի պէս հզօր, բարգաւաճ գաղութները ներկայացնում են մի-մի ինքնավար ու ինքնօրէն, գրեթէ անկախ պետութիւններ, կապուած դաշնակցական թոյլ կապերով Մայր-երկրի (Բրիտանիայի) հետ։

Կապիտալիզմի զարգացումը քնաւ չի խախտում այդ երկրների աւտոնոմիան ու ինքնավարութիւնը, ինչպէս որ պէտք էր սպասել ռուսական սոց.-դէմոկրատների թէորիայի համեմատ։ Կապիտալիզմի առաջադիմութիւնը արգելք չի գտնում և Հս. Ամերիկայի և Հվէյցարիայի դաշնակցական պետութիւնների մէջ և կիսադաշնակցական, կիսաֆէդէրատիվ Գերմանիայում, ուր որոշ չափով աւտոնոմիա տրուած է գերմանական նախնի մանր պետութիւններին, բայց ոչ հպատակ օտար ազգերին։

Մտքի ու բարքերի աստիճանական ռամկավարացումը ամեն տեղ հրապարակ է հանում ապակենտրոնացման նշանաբանը, նա հնչում է հրամայական շեշտով մանաւանդ այն բարդ, այլատարր պետութիւնների մէջ—Աւստրիայում, Ռուսաստանում, Տաճկաստանում—ուր ազգային կռիւը եթէ ոչ աւելի՝ գէթ նոյնքան ծանրակշիռ մի ֆակտոր է հասարակական էւոլիւցիայի մէջ, որքան դասակարգայինը, ուր ցեղագրական միութիւնները կանգնած են խիստ տարբեր մտաւոր—կուլտուրական աստիճանների վրայ, ուր հետևապէս մի ամբողջական, միապաղաղ օրէնսդրութիւնը բովանդակ երկրի համար՝ կը լիներ բացարձակ անհեթեթութիւն։ Օրէնքները, եթէ ուզում ենք որ համապատասխան լինին այս կամ այն վայրի ազգաբնակութեան շահերին՝ պէտք է մշակուին մի այնպիսի մարմնի, ժողովի ձեռքով, որ ընտրած է օրինաւորապէս այդ իսկ վայրի ազգաբնակութեան կողմից։ Քաղաքական այդ սիստէմը, որ բնորոշում է „ապակենտրոն“ բառով, անհունապէս աւելի բարձր է կենտրոնականից, քանի որ նա զարթեցնում է տեղական նախաձեռնութիւն, խթանում է ընդհանրապէս իներտ գաւառական ժողովրդին դէպի գործօն քաղաքական կեանք, դէպի գիտակցական վերաբերմունք այն բոլոր կենսական խնդիրներում, որոնք ալեկոծում են ամբողջ երկիրը։ Որքա՜ն դրանով հեշտանում և արագանում է փոքրիկ ազգերի ու համայնքների կուլտուրական բարեկարգումների գործը...

Ապակենտրոնական կարգերի մէջ՝ սոցիալիստական շարժումը և զարգանում է աւելի նորմալ ճանապարհով, աւելի արագ ու յստակ։ Մենք արդէն շեշտեցինք, որ կենտրոնացման բէժիմի տակ գերիշխող ազգի ոտընձգութիւնների շնորհիւ, ստեղծուում է մանր, հպատակ ազգերի համար մի ծանր մթնոլորտ, որ անդրադառնում է և աշխատաւոր դասակարգերի հոգեբանութեան ու նրանց փոխադարձ յարաբերութիւնների վրայ։ Ազգային պայքարը սովորաբար փոխադրուում է կենտրոնական պարլամենտները (Աւստրիա, Գերմանիա, Ռուսաստան), ազգային նշանաբանը յաճախ մթնացնում է դասակարգայինը և դրանից տուժում է սոցիալիստական ընդհանուր շարժումը...

„Դասակարգային կռիւը բարդանում է մասնաւորապէս այն երկրներում, ուր գերիշխող ազգութեան ներկայացուցիչները, իրենց ձեռքն առնելով պետական և հասարակական բոլոր հաստատութիւնները, ճնշում են թոյլ ազգերին և առհասարակ փոքրամասնութիւն կազմող միութիւններին։

„Զրկուելով հասարակական ու պետական կեանքին ակտիվ մասնակցելու հնարաւորութիւնից, տուժելով և նիւթապէս և կուլտուրապէս, այդ թոյլ միութիւնները յետ են մնում առաջադիմութեան ճանապարհի վրայ և այդպիսով դանդաղում է համամարդկային կուլտուրայի հետ՝ աշխատաւորի սոցիալական ազատագրութիւնը, քանի որ այդպիսով խոչընդոտ է դրուում մի կողմից դասակարգային հակամարտութեան զարգացմանը ճնշուած ազգութիւնների մէջ, միւս կողմից՝ ճնշող ու ճնշուող ազգերին պատկանող աշխատաւոր դասակարգերի համերաշխութեանը“։

Այսպէս է յայտարարում մեր „դաշնակցական“ ծրագիրը։ Եւ այդ ու ուրիշ յիշատակուած պատճառաբանութիւններով է, որ „Դաշնակցութիւնը“ կանգնած է մնում—թէ Թիւրքիայում, թէ Ռուսաստանում—ապակենտրոն բէժիմի, ֆէդերացիայի հողի վրայ, պահանջում է ուրիշ սոցիալիստ-յեղափոխական տարրերի հետ այնպիսի կարգեր, ուր իւրաքանչիւր մի ազգ, իւրաքանչիւր մի հասարակական միութիւն վայելէ, ըստ կարելւոյն, լայն ինքնօրինութիւն ու ինքնավարութիւն իր ներքին գործերում։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Վեցերորդ Համակ

Վերջացնենք մեր զրոյցը հողի համայնացման մասին։ Երկու տարի սրանից առաջ Մոսկուայում տեղի ունեցաւ գիւղացիական միութեան ներկայացուցիչների հա-

մաժողով։ Խօսեցին գիւղացու ցաւոտ կողմի՝ հողի մասին, վիճեցին, թէ ինչպէս դարձնել ամբողջ հողը ամբողջ ժողովրդի վայելքի առարկայ։ Կային համաժողովում և սօցիալ-դէմօկրատներ։ Նրանցից մէկը սկսեց ապացուցանել, որ „եթէ Ռուսաստանի ամբողջ մշակելի հողը տանք գիւղացիներին,—ապա նրանցից իւրաքանչիւրին կը հասնի ոչ աւելի, քան մէկ դեսեատին“։

Այդ արգումենտով—որի աղն ու թոյնը դուք, իհարկէ, լաւ էք հասկանում—սօցիալ-դէմօկրատը ուզում էր մէկ հարուածով գետին տապալել և մահացնել „հողի համայնացման“ կողմնակիցներին։ Սակայն գնդակը, ինչպէս այդ յաճախ է պատահում մեր սօցիալ-դէմօկրատների հետ—ոչ միայն չը խփեց իր նպատակակէտին, այլ և նա դատարկ էր։ Այդ սօցիալ-դէմօկրատից յետոյ, որ խօսում էր հողի սակաւութեան մասին, տեղից վերկացաւ մի գիւղացի և յայտարարեց.

—„Ոչի՛նչ, մեզ բաւական կը լինի։ Դուք, աւելի լաւ է, հաշուեցէք ուրիշ կերպ. օրինակ գիւղացիք աշխատում են մի մասը իրենց սեփական հողի վրայ, միւս մասը՝ կապալով առած հողերի վրայ, իսկ երրորդ մասը՝ կալուածատէրերի տնտեսութեան մէջ։ Պէտք է այդ բոլոր երեք մասերն էլ գիւղացիներին տալ։ Դրանից աւելի թէ որքան հող կայ, մենք չենք փնտռում։“

Պարզ չէ՞ արդեօք, որ այդ գիւղացին հարիւր անգամ աւելի լաւ է ըմբռնել հողի համայնացման էութիւնը, քան սօցիալ-դէմօկրատը, որ միայն մի երգ է յօրինել. „հողը իբր թէ բաւականութիւն չի անի“... Գիւղացու ըմբռնումով, հողի համայնացումը կը վերացնէ անհրաժեշտութիւնը՝ վերցնելու հողը կապալով հողատէրերից կամ „կուլակներից“, նա կը վերացնէ նաև անհրաժեշտութիւնը՝ աշխատելու կալուածատէրերի, ագաների տնտեսութեան մէջ։ Իսկ կարևորը հէնց այդ է։ Ազատուելով կապալավճարից ու ագայական բէգեառից*, գիւղացին կունենայ իր ձեռքում ամբողջապէս իր սեփական աշխատանքի արդիւնքը, մինչդեռ այսօր այդ արդիւնքից առիւծի բաժինը մտնում է ագայի կամ կուլակ-հողատիրոջ գրպանը։

Այդպէս ուրեմն, ոչ մի տարակոյս չը կայ, որ հողերի համայնացումը կը բարձրացնէ գիւղացիների բարեկեցութիւնը և դուրս կը բերէ մեր գիւղական տնտեսութիւնը այն սարսափելի անել վիճակից, ուր նա ընկել է, շնորհիւ այժմեան հողային կարգերին։ Իսկ գիւղատնտեսական արդիւնաբերութեան աճումը և աշխատաւոր գիւղացիութեան կեանքի բարելաւումը իր կողմից բարերար անդրադարձում կունենայ մեր հայրենիքի ամբողջ ազգաբնակութեան և նախ և առաջ, իհարկէ, գործարանային ու հանքագործական բանուորների վրայ։ Թէ ինչու այդպէս կը լինի, դժուար չէ հասկանալ։

Այսօր աղքատացած, աւերուած գիւղը նետում է տասնեակ հազարաւոր մարդիկ դէպի աշխատանքի շուկայ. մարդիկ՝ որոնք կարօտ են վաստակի։ Անապաստան, կիսաքաղց՝ նրանք վազում են գիւղից քաղաք և առաջարկում են իրենց աշխատանքը արդիւնաբերողներին՝ չնչին, գրօշանոց վարձատրութեան համար։ Աշխատադուրկների թիւըն աճում է։ Ստւարանում են գործարան մտնել ցանկացողների շարքերը։ Եւ ահա այդ „տրեխները“ (այդպէս են անւանում նրանց՝ քաղաքային բանւորները)—իջեցնում են գործարանների մէջ օրավարձը, վատթարացնում են իրենց քաղաքային վիճակակից եղբայրների դրութիւնը, որովհետև գործարանատէրերը, օգտւելով աշխատաւորների հեղեղումից, առանց այլևայլութեան հուփ են տալիս իրենց սեփական բանւորներին։

Այդպիսի բան չի կարող տեղի ունենալ այն ժամանակ, երբ հողի համայնացման հետ կը չքանայ հողի կարօտութիւնը, կը վերանան կապալավճարն ու ագայական բէգեառը, կը վերանայ այն բոլորը, ինչոր դուրս է շպրտել գիւղացուն գիւղից։ Այն ժամանակ „տրեխների“ ակամայ մղումը դէպի քաղաք, ոչ միայն կը կրճատւի, այլ գուցէ և բոլորովին կը դադարի։ Նրանք վերստին կը գան իրենց լքած գիւղը։ Աշխատադուրկների թւի այդ կրճատումը, այդ յետադարձ մղումը քաղաքից դէպի գիւղ՝ կըստիպէ խոնարհւիլ գործատէր ագաներին, հնարաւորութիւն կը տայ քաղաքային բանւորներին՝ պահանջկոտ լինելու „տէրերի“ հետ, և աւելի համարձակ կռւելու նրանց դէմ, յանուն լաւագոյն վիճակի։

Հողի համայնացումը ուրիշ ճանապարհներով ևս պիտի անդրադառնայ քաղաքային բանւորների ճակատագրի վրայ։ Գիւղացիների բարեկեցութեան բարձրանալու հետ միասին կը բարձրանայ, իհարկէ, և նրանց գնողական (գնելու) ոյժը, որ այժմ թոյլ է, շնորհիւ անծայր թշւառութեան։ Իսկ երբ կը բարձրանայ գնողական կարողութիւնը բազմամիլիոն գիւղացիութեան մէջ, հէնց այդ հանգամանքը կը ստեղծէ մեզ մօտ ներքին ընդարձակ շուկայ ամեն տեսակ և առաջնակարգ կարևորութիւն ունեցող ապրանքների համար, որոնք կը պատրաստւին մեր գործարաններում։ Կ՚աճի այդ ապրանքների պահանջը—կ՚աճի դրա հետ և նրանց արտադրութիւնը։ Գործարանները, զաւօդներն ու հանքերը կըսկսեն աշխատել շատ աւելի եռանդով, քան աշխատում են մեր օրերում։ Արդիւնաբերութիւնն ու առևտուրը հսկայական չափեր կառնեն։ Կը բարձրանայ բանւորների պահանջը—դրա հետ կը բարձրանայ և նրանց ոգին։ Բանւորները կըզգան, որ գործատէրերը կարիք ունին նրանց մէջ. իսկ դա, համաձայնեցէք, շօշափելի փաստ է արդիւնաբերական պրօլետարիատի ձեռքում՝ նրա կռւի մէջ։

Եւ այդպէս, դուք տեսնում էք, ընթերցող, որ հողի համայնացումը անհրաժեշտ է ոչ միայն գիւղացիութեանը, այլ և քաղաքային պրօլետարիատին,—անհրաժեշտ է՝ կռւելու համար աշխատաւոր ժողովրդի շահագործման դէմ։ Անհրաժեշտ է նա, վերջապէս, կռւելու իսկական, հաստատուն ազատութեան համար։ Արդարև։

Ովքե՞ր են մեր խոշոր հողատէրերը։ Գլխաւորապէս—ազնւական-պոմէշչիկներ։ Ապրում են նրանք այն եկամուտներով, որ ստանում են իրենց հողից։ Չեն ցանում, չեն հնձում և ապրում են ուրախ ու անհոգ։ Մարդկանց այդ ամբողջ դասակարգը, սակաւ բացառութեամբ, կապւած է բոլոր սրտով „հին կարգերի“ հետ և կատաղօրէն ատում է ամեն մի նորմուծութիւն, բարենորոգութիւն, որ նպատակ ունի բարւոքել աշխատաւոր ժողովրդի վիճակը։ Նա չի ուզում ոչ նորմուծութիւն, ոչ էլ „ազատութիւնը բոլորի համար“։ Եւ դժւար չէ հասկա-

* Խոշոր կալուածատէրերը յաճախ տալիս են գիւղացիներին փոքրիկ հողաբաժիններ այն պայմանով, որ նրանք մշակեն, ցանեն ու հնձեն դրա փոխարէն մի քանի դեսեատին ագայական հողից: Դա է որ կոչւում է ագայական բէգեառ (գօսպօդսկայա կաբալա):

նալ, թէ ինչու նա չի ուզում: Խոշոր հողատէրերը շատ լաւ են զգում, որ նորմուծութիւններն ու ազատութիւնը—որոնց համար մեզ մօտ մղւում է կռիւը—արմատից կը կտրեն իրենց այժմեան բարեկեցութիւնը, կը խլեն իրենցից և հարստութիւն, և իշխանութիւն, և փառք: Ուստի և այդ մարդիկ այնպէս եռանդով պատերազմում են յանուն հին կարգերի և ընդդէմ նորերի: Ուստի և ինքը կառավարութիւնը, որ նպատակ է դրել՝ ըստ առաջնոյն պահել թշառութեան, տգիտութեան ու ստրկութեան մէջ ամբողջ աշխատաւոր ժողովուրդին, մտերիմ բարեկամութիւն է պահպանում հողատէր ազնուականների հետ, յենւում է նրանց անիրաւ ուժի վրայ: Այդ ուժը մութ է և չարագործ: Պէտք է խլել յենարանը նրա ոտի տակից: Իսկ յենւում է նա իր խոշոր հողերի վրայ: Հողի համայնացումից յետոյ՝ այլևս չեն լինի այդ „խոշոր հողերը“.—դրանով կը չքանայ, ուրեմն, և այն մութ ու չարագործ ուժը, որ այսօր արգելք է լինում մեր հայրենիքի վերանորոգութեանը և որ միշտ պատրաստ է յետ վերադարձնել այդ հայրենիքը, դէպի այն ժամանակները, երբ մեզ մօտ շատ քչերն էին համարձակւում մտածել անգամ հողի ու ազատութեան մասին:

*

Ես ամենևին չեմ ուզում ասել, որ հողի համայնացումը մի համադարման է բոլոր չարիքների դէմ, որոնք ծանրացած են աշխատաւոր գիւղացիութեան վրայ: Ես ամենևին չեմ պնդում, որ հողի համայնացումը կազատէ գիւղը ամեն տեսակ գիշատումներից և կը հիմնէ այնտեղ երկրաւոր դրախտը: Եւ ոչ ոք հողի համայնացման կողմնակիցներից, ոչ մէկը, որ տէր է իր մտաւոր կարողութիւններին՝ երբէք այդպիսի բան չի մտածել և չի պնդել:

Արձանագրելով այն բոլորը, ինչ որ հողի համայնացումը պիտի տայ աշխատաւոր դասակարգերին և ինչից որ նա պիտի ազատէ նրանց, ես պէտք եմ համարում այստեղ իսկ ցոյց տալ, թէ ինչ նա չի կարող տալ, ինչից նա չի ազատի և չի կարող ազատել աշխատաւոր գիւղացիութիւնը:

Նախ: Համայնացման ժամանակ ևս գիւղացիութիւնը կարիք պիտի ունենայ դրամական փոխատուութիւններին՝ իր տնտեսութիւնը պահպանելու և բարելաւելու համար: Քանի որ պետութիւնը և ինքնավարութեան տեղական օրգանները չեն կարողանալու լիովին գոհացումն տալ գիւղացիութեան այդ կարիքին, ուստի վերջինը դարձեալ յայտնի չափով կախուած է մնալու այլ և այլ վաշխառուներից, որոնք սիրալիր կերպով առաջարկելու են գիւղացուն իրենց „օգնութիւնը“: Հողի համայնացումը չի թոյլ տայ, որ ծնունդ առնեն նոր աշխարհակալներ հողային սեփականութեան աշխարհում, բայց նա անզօր է վերացնելու վաշխառուների ագահ ցեղը:

Յետոյ: Հողի համայնացման ժամանակ ևս գիւղացին պիտի գործ ունենայ զանազան տեսակ միջնորդների ու առևտրականների հետ, պիտի գնէ նրանցից կամ նրանց միջոցով կեանքի ու տնտեսութեան համար անհրաժեշտ ապրանքներ և պիտի վաճառէ կամ ուղղակի այդ առևտրականներին կամ թէ միջնորդների միջոցով՝ երկրագործութեան բերքերը: Իսկ քանի որ ամեն մի առևտուր, ամեն միջնորդութիւն կապւած է խաբեբայութեան հետ, քանի որ նրանց ընթացքում թալանւում է անմիջական արդիւնաբերողների, գիւղացոց դասակարգը, ապա ուրեմն այդ խաբէութիւնն ու թալանը պիտի շարունակւին և հողի համայնացման ժամանակ:

Վերջապէս: Խաբեբայութեան ու թալանի գործում, միջնորդների ու վաճառականների օգնութեան պիտի գան և խոշոր արդիւնաբերողները, գլխաւորապէս նրանք, որոնք իրենց գործարաններով ցանց են կազմում սովորաբար գիւղի մերձակայքում, ուր նրանք գնում են իրենց համար անհրաժեշտ „հում նիւթը“: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ տեսակ գնումների ժամանակ անպակաս են լինում խաբէութիւններն ու թալանը այդ խոշոր գործարանատէրերի կողմից,—և հողի համայնացումը անկարող է վերացնել այդ չարիքը ևս:

Մի խօսքով, հողի համայնացումը չի ոչնչացնի բոլոր պատուհասները գիւղական աշխարհում, նա չի ազատի նրան վաշխառուներից ու միջնորդներից, վաճառականներից ու արդիւնաբերող գործարանատէրերից: Ազատելով գիւղը հողային կապիտալի կապանքներից՝ հողի համայնացումը անզօր է ազատելու նրան վաշխառուական, վաճառականական և մասամբ արդիւնաբերական կապիտալի շահագործումներից: Բոլոր պատուհասները կը վերանան գիւղից և քաղաքից, բոլոր շահագործումները, խաբէութիւնները, գիշատումներն ու թալանները կը չքանան այնտեղից՝ միայն սոցիալիզմի տիրապետութեամբ: Սոցիալիզմ և հողերի համայնացում — շատ տարբեր բաներ են:

Որո՞նք են իսկապէս ապագայ սոցիալիստական կազմակերպութեան բնորոշ առանձնայատկութիւնները:

Սոցիալիզմի մէջ՝ արդիւնագործութեան բոլոր միջոցները*, որոնք ներկայումս առանձին անհատների մասնաւոր սեփականութիւն են կազմում—կը դառնան համայնական, այսինքն ամբողջ ժողովրդի սեփականութիւն:

Ապա, սոցիալիզմի ժամանակ ժողովրդական ամբողջ տնտեսութիւնը—և գործարանային և երկրագործական—տրւելու է լայն հաւաքական (կոլլեկտիվ) հիմունքներով, կատարելագործւած գործիքների ու մեքենաների օգնութեամբ: Այն ժամանակ ուրեմն պիտի համայնացւի նաև արդիւնագործութեան պրոցէսը (արդիւնաբերական և երկրագործական աշխատանքը):

Այստեղից հետևում է, որ սոցիալիզմը—դատելով տնտեսագէտի, էկոնոմիստի տեսակէտից—համայնացումն է և՛ արդիւնագործութեան միջոցների, և՛ արդիւնագործութեան պրոցէսի, այսինքն համայնացումն՝ և աշխատանքի և այդ աշխատանքի գործիքների: Կամ ուրիշ խօսքերով՝ բոլորն էլ աշխատում են համերաշխ ու համայնօրէն, աշխատում են այն գործիքներով կամ այն միջոցներով, որոնք պատկանում են ամբողջ ժողովուրդին (հող, գործարաններ, մեքենաներ, և այլն), և աշխատում են յօգուտ ընդհանրութեան,—այս է սոցիալիզմը:

Դուք տեսնում էք, ուրեմն, որ հողի համայնացումից մինչև սոցիալիզմ՝ իրօք պատկառելի տարածութիւն կայ:

---

* Այսինքն՝ հողերը, շինութիւնները, արհեստանոցները, մեքենաները, դրամական կապիտալները եւայլն: Տես իմ „առաջին նամակը“:

Սակայն հողի համայնացումը ուղղակի առնչութիւն ունի սօցիալիզմի հետ։

Եւ գործարանային բանւորները և աշխատաւոր գիւղացիք, և „քաղաքը" և „գիւղը" պիտի յանգին սօցիալիզմին միաժամանակ։

Բայց գործարանային բանւորները և աշխատաւոր գիւղացիք գնում են դէպի սօցիալիզմ տարբեր ճանապարհներով,—այդ է գործի էութիւնը, այդ մէկը չը պէտք է վրիպի մեր ուշադրութիւնից։

Աշխատանքը գործարանային տնտեսութեան մէջ համայնանում է արդէն իրերի բնական ընթացքով. այնտեղ հարիւրաւոր ու հազարաւոր բանւորներ աշխատում են միասին, հաւաքական կերպով, մեքենաների օգնութեամբ։ Ուրիշ խօսքով՝ աշխատանքն այդտեղ արդէն համայնացած է։ Ուրեմն, երբ գործարաններն ու զաւօդները, կը գրւին բանւորների ազատ տնօրինութեան տակ, երբ կը համայնացրւին, գործարանային տնտեսութեան բոլոր գործիքները,—այն ժամանակ „քաղաքի" համար կը հասնի „սօցիալիզմի թագաւորութիւնը"։

Այդպէս չէ գիւղական տնտեսութեան մէջ։ Այդտեղ դեռևս համայնացած չեն՝ ոչ աշխատանքը (կամ արդիւնագործութեան պրօցէսը), ոչ էլ աշխատանքի միջոցները։ Հողի համայնացումը, ինչպէս արդէն յայտնի է ձեզ, այն գործողութիւնն է, որով ամբողջ հողը տրւում է ամբողջ ժողովրդին։

Երբ հողը գիւղատնտեսութեան այդ ամենակարևոր միջոցը—կը համայնացւի, կը դառնայ ամբողջ ժողովրդի սեփականութիւն, այն ժամանակ սօցիալիզմը գիւղական աշխարհում մտցնելու համար՝ հարկաւոր կը լինի համայնացնել գիւղատնտեսական աշխատանքը, այսինքն դնել երկրագործական տնտեսութիւնը լայն հաւաքական հիմքերի վրայ, կատարելագործւած մեքենաների ու գործիքների օգնութեամբ։

Այդպիսով՝

Գործարանային պրօլետարը աշխատանքի համայնացումից գնում է դէպի աշխատանքի գործիքների (կամ միջոցների) համայնացում, մինչդեռ գիւղացիութիւնը ընդհակառակը՝ աշխատանքի միջոցների համայնացումից գնում է դէպի աշխատանքի համայնացումն։

Կամ ուրիշ խօսքով.

„Քաղաքի" համար ճանապարհը դէպի սօցիալիզմ բացւում է աշխատանքի (կամ արդիւնագործութեան պրօցէսի) համայնացումով։ Իսկ գիւղի համար՝ այդ նոյն ճանապարհը բացւում է արդիւնագործութեան ամենակարևոր միջոցի, հողի համայնացումով։

Ահա թէ ինչու մենք այնքան յամառութեամբ ծանրանում ենք „հողի համայնացման" անհրաժեշտութեան վրայ. ահա թէ ինչու մեր նւազագոյն ծրագրի մէջ նա բռնում է կենտրոնական տեղ։ Հողի համայնացումը—դա միակ րէալական, ուղիղ և բանաւոր միջոցն է բարձրացնելու աշխատաւոր գիւղացիութեան բարեկեցութիւնը։ Հողի համայնացումը—դա անհրաժեշտ օղակն է, անխուսափելի հանգրւանը „գիւղի" էւօլիւցիայի մէջ—դէպի սօցիալիզմ։

Sapienti sat...

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՄԵՐ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՎԱՆ, 13 յունւար, 1908

Ձմեռւայ ցուրտ հողմերի հետ կարծես ամբողջ Տաճկաստանի—գէթ սա փաստ է մեր դրացի վիլայէթներում—վրայով անցաւ րէակցիայի սև ամպը... Ամառւայ խանդավառութիւններին հետևեցին անյաջողութիւններ, լքում և վերջը արդէն ապատիա։ Կանգ առնենք այդ երևոյթների գլխաւորների վրայ համառօտիւ։

ա) Ամենալուսաւոր աստղը այս տարի թիւրքական շարժումներն էին։ Այս տարի էլ այդ շարժման առաջապահը Էրզրումը եղաւ. բայց անցեալ տարւայ պէս հոն չը մնաց. նրա արձագանքները մինչև Տիարբէքիր, Բիթլիս և Վան հասաւ. ամառւայ ընթացքում լինում էին օրեր և շաբաթներ, որ մարդ կարծում էր ահա՛ մի հարւած էլ և բռնակալութիւնը տեղի պիտի տայ։ Բայց լաւատեսների բոլոր յոյսերը ի դերև ելան։ Յայտնի է արդէն Տիարբէքիրի ցոյցի պատճառներն ու արդիւնքը. ամբողջ քաղաքի և 16 գիւղերի ժողովուրդը փոստախանան գրաւելով, կուսակալից կառավարական կնիքը առնելով, հեռագրում են իրենց թշւառ կացութեան մասին Կ. Պոլիս և անմիջական հեռացումն են պահանջում Իբրահիմ փաշայի—քիւրդ աշիրաթապետի։ Եըլդըզը իր սովորական արևելեան քաղաքականութեամբ „բալի օլլում" ասելով ժողովուրդին հանդարտացրեց։

Բիթլիսը աւելի խայտառակ է. այն գեղեցիկ ցոյցերից յետոյ այդ քաղաքը կարծես մեռաւ. հոն այժմ կատարեալ անիշխանութիւն է, շէյխերի դիկտատուրա։ Ամեն մէկը ուզում է ինքը մինակ կողոպտել ժողովրդին։ Շէյխերը առայժմ իրար միս են ուտում անցեալ դէպքի առթիւ հանգանակած դրամը իրենց մէջ բաժանելու համար... Այնտեղի կեանքին մօտ և ականատես մարդիկ պատմում են, որ այնտեղ տարածւում են մեծ քանակութեամբ արտասահմանեան երիտասարդ թիւրքերի թերթերից. երիտասարդութիւնը և մտաւորականութիւնը տարւած են այդ նոր հոսանքով...։ Իսկ քրդերը, նրանց համար արքայութիւն է. օրը ցերեկով կառավարութեան աչքի առաջ ու քթի տակ, քաղաքից կէս ժամ հեռու հայ և քիւրդ երկրագործ գիւղերն են թալանում ու կողոպտում։ Անարխիայի ժամանակ սև հարիւրակային հերոսները իրենց շատ լաւ են զգում ոչ միայն Բիթլիսում այլև ամբողջ Տաճկաստանում։

Էրզրումի մասին անշուշտ լսեցիք, խօսւում է 150—200 բանտարկութեանց մասին. սարսափ տարածելու համար՝ կառավարութեան ագենտները պատմում են կախաղանների, հրացանի բռնելու մասին. առհասարակ Էրզրումի պարտութիւնը թիւրք ժողովուրդի վրայ այն ազդեցութիւնը թողեց, ինչ որ Սասունինը մեզ՝ հայերիս վրայ...։ Րէակցիայի ծայրը կարծես այդտեղից սկիզբն առաւ. Թիւրք շարժման առաջապահը իր փառաւոր գործունէութեան առաջին շրջանը փակեց-բազմաթիւ զոհերով, Թիւրք մասսայական շարժումը իր երեխայրիքը տւաւ...։

Ինտելլիգենտ փորձւած ուժերի բացակայութիւնը ճակատագրականօրէն ազդեց Էրզրումի և առհասարակ բոլոր վայրերի թիւրք շարժման վրայ։ Այդ շարժումը տարւաւ առաջին շրջանում օրինական հողի վրայ. դաւադրական գործունէութիւն պակասում էր. ամեն քաղաքների կօմիտէները յայտնի էին. նոյն իսկ յայտարարութիւնները անւում էին նրա անունով. այս ինչ „շէյխ էֆէնտի, կամ մուֆտի էֆէնտի և կամ Ագիֆ էֆէնտի էմրի իլէ եարըն դիւքիանլար գափանաճագ"։ (Այսինչ էֆէնտիի կամ աղայի հրամանով վաղ խանութները փակւելու է)։ Եւ փորձէք դրանց խորհուրդ տալ թէ այդ գործողութիւնները գաղտնի պիտի լինին, վաղը կառավարութիւնը բոլորին ծուղակ կը ձգէ, միամտաբար կը պատասխանեն. „այսպէս կ՚անենք որպէսզի կառավարութիւնը չը կասկածի որ մենք փէդայի ենք"... Իբր թէ կոմիսէր սպանելը, վալին տփելը

յեղափոխութիւն չէ... Զարմանալու բան չը կայ. բոլոր ազգերն էլ այդպէս են սկսել։ Երբ մի շարժման ղեկը ընկնում է բացառաբար ժողովրդական տիպերի ձեռքը, որոնք չունին պահանջուած կրթութիւնն ու փորձառութիւնը, որպէսզի կարողանան օգտուիլ ուրիշ ազգերի փորձերից, ելքը այդպէս կը լինի...։ Բայց և այնպէս Էրզրումը խրատուեց և երկրորդ շրջանը կը լինի աւելի փորձուած, գաղտնի, դաւադրական ոգով։

Վանը պէտք է ասենք մի փոքրիկ բացառութիւն է կազմում այս բոլորի մէջ։ Այստեղ ինչպէս գիտէք շարժումները այնքան մեծ աղմուկներով և ցոյցերով չարտայայտուեցին. պատճառները պարզ էին։ Այստեղ Թուրքութիւնը չնչին փոքրամասնութիւն է կազմում. միջին դասակարգը բացառապէս պաշտօնէութիւնն է, բայց պէտք է խոստովանել և այն որ այստեղ գործը սկզբից դրուեց ամուր և դաւադրական-յեղափոխական հիմքի վրայ։ Այստեղ ոչ կառավարութիւնը և ոչ էլ ժողովուրդը չիմացան թիւրքերի ղեկավար մարդկանց ով լինելը, „Սապահ-իւլ-խայր" թերթի խմբագիրներն ու տպագրողները. Թռուցիկ գրողներն ու ցրուողները, գործ ստեղծողները ևայլն, բայց ճիշտ է և այն, որ այս ձևի գործունէութիւնը չը կարողացաւ ժողովրդական լայն խաւերի լայն օժանդակութեանն ու աջակցութեանը արժանանալ, նա մնաց նեղ, ինտելլիգէնտ—երիտասարդութեան շրջաներում... Այսօր այստեղ գործը սովորական վճռականով գնում է, ամէն ամիս նոր-նոր շրջաններ ընդգրկելով։ Այստեղի շարժումը, մեծ մասամբ պրոպագանդա—ագիտացիական գոյն առաւ. 15 օրեայ թերթը, մշտական թռուցիկները, արտասահմանեան թերթերու հրատարակութիւններ, այն էլ ոչ թէ միայն այստեղ էր տարածւում, այլ վիլայէթի ամենայետին ու խուլ անկիւնները և այլ վիլայէթներ։ Վանը դարձաւ մի տեսակ մասսայական հոսանքների կենդրոն...։

Մնացած վայրերի մասին անշուշտ մեզնից շատ տեղեկութիւններ կ'ունենաք։ Ինչպէս էլ որ լինի, սակայն փաստ է որ Թիւրք շարժումը թևակոխում է իր երկրորդ շրջանը։ Այսօր թէև գործունէութիւնը անյայտ է և խուլ, բայց դա նման է երկրաշարժի, դեռ գետնի տակ է։ Բայց ինչ որ էլ լինի, Թիւրք շարժումը կարիք ունի մասսայական ղեկավարների։ Պէտք է ասել Թիւրք ազատականներին կամ յեղափոխականներին որ խօսքի շրջանն անցաւ, ժողովրդական կեանքը ցնցուել. հողը պատրաստ է, թող գան դէպի երկիր... Նրանց ներկայութիւնն է որ շարժմանը կազմակերպչական ու յեղափոխական գոյն պիտի տայ։ Սպասում ենք...։

բ) Սով կամ անբերրութիւն.—Ինչքան լսում ենք ամբողջ Տաճկաստանում ընդհանուր սով է. մասնաւորապէս սոսկալի սով է Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայէթներում։ Սովի պատճառների վրայ կանգ չենք առնի, դա յայտնի է, գիւղային տնտեսութիւնն ընկել է. հողերը կենդրոնացել են քիւրդ, Թիւրք և հայ աղաների ձեռքը։ Այսօր Վանում չափ ցորենը ծախւում է մէկ օսմ. ոսկի, ուրիշ աշխատանք էլ չը կայ, որ մարդիկ կարողանան դէթ թանգ գնով հաց գնելու։ Սովը պէտք է խոստովանել մասամբ արհեստական է. հէնց միայն քաղաքում 20—30,000 չափ հաց կայ Թիւրք աղաների ամբարներում, պահում են դիտմամբ։ Լուրեր են պտտում, որ կառավարութիւնը թաթը դրել է թէ քաղաքի և թէ գաւառի ամբարների վրայ, պատերազմի համար իբր թէ պատրաստութիւններ է տեսնում։

Բոլոր ժողովուրդները առանց բացառութեան սովի ճիրաններում են. թշուառ կացութեան մէջ են հաւասար չափով հայ, քիւրդ և Թիւրք երկրագործ աշխատաւորները։ Լեռնային մասերում հոկտեմբերից արդէն սով էր։ Վերջերս լսում ենք որ ամբողջ եղած չեղած երկրագործութեան համար հարկաւոր կենդանիները մորթում և դրանով մի քանի շաբաթ էլ քարշ են տալիս իրենց թշուառ կացութիւնը։ Լեռնային գիւղերում բնակչութեան կէսից աւելին փախել են. Մոկսում տղամարդ չէք գտնի. նոյնն է և մնացած վայրերում. փախել են՝ Դիարբէքիր, Սղերդ և կամ եկել են Վան։ Սալաֆը սոսկալի չափեր է առնում. 15 ղուրուշով մի չափի սալաֆ են վերցնում (15 ղրշ. են տալիս, կալին մի չափ ցորեն՝ այսինքն 108 ղրշ. ստանալու համար)։

Արտասահման փախչողների Թիւը հարիւրներ, հազարներ եղան, ոչ մի կերպ կանգնեցնել չի լինում, փախչում են խելակորոյս իրենք էլ չը գիտեն ո՞ւր և ինչո՞ւ...։

Քաղաքի վիճակն աւելի սոսկալի է։ Գաւառի աղքատները թափուել են քաղաք։ Անցեալները մեր ընկերների կողմից կազմուած մի փոքրիկ ստատիստիկա, այն էլ միայն Այգեստանի մի քանի թաղերում, 5000 սովեալների հասաւ...։ Արտասահմանից եկած նպաստից դրամներն անկարող են փրկել այս ժողովրդին։ Վան եկել է մասնաւորապէս 1500—2000 օսմ. ոսկի, Առաջնորդարանի, հիւպատոսարանների, միսիոնարութեան և այլ միջոցներով։ Եկած դրամները մեծ մասամբ հայկական գաղութներից էին։ Եւրոպան այս տարի իր գրպանները պինդ է փակել, երևի „հաւատարութեան" միսիան անյաջողութեան հանդիպեց...։ Մոռացայ յիշել, որ ծայր աստիճան դժբախտ կացութեան մէջ են քաղաքի Թիւրք ժողովրդի աղքատ խաւերը, ոչ մի կողմից օգնութեան յոյս, թողնուած են իրենց ճակատագրին...։

Համաճարակ հիւանդութիւնները ուղեկցում են սովին։ Եւ խեղճների կոտորած է. անկարելի է ման գալ քաղաքի մէջ ցերեկները. ամեն կողմից փէշերից են կախւում. մարդու սիրտը ճմլւում է. աչքովս տասնեակ ընտանիքներ եմ տեսել քաղաքում 8—10 անդամներով, որ օրերով սովամահ, դալուկ դէմքով թափուած են թոնիրներու վրայ, մի հնամաշ վերմակի տակ.. չէք կարող երևակայել այս վիճակը. գրիչ չը կայ պատկերացնող այս վիճակը։ Մեզնից ստատիստիկական տեղեկութիւններ են ուզում, ո՞ր մէկինը տանք. ժողովուրդի 2 | 3-ը անպայման սովի ճիրաններում է... Ճար չը կայ, սով է այն էլ սոսկալի սով. Այժմ հասկանալի է թէ ժողովուրդը ինչու է լքուած, յուսահատ. նա նախ իր գոյութեան մասին պէտք է խորհի...։

գ) Պատերազմի շշուկներ և սահմանագլխի դէպքեր.—Եթէ ասեմ բոլորից շատ պատերազմի լուրերն են ազդում ժողովրդի տրամադրութեան վրայ, մանաւանդ Թիւրք և քիւրդ, սխալուած չեմ լինի։ Խօսում են ռուս-Թիւրքական, Թիւրք-բուլգարական կռւի մասին, իսկ Թիւրք-պարսկական կռիւը խօ կայ ու կայ։ Վերջինն արդէն մեր քթի տակ է կատարւում. սակայն և այնպէս մենք չենք կարող այնքան լուրեր առնել, որքան արտասահման։ Այստեղից զօրքեր են տանում, զօրքերը մերկ, անօթի։ Սահմանագլխում մի Թապուր ասում են քիչ է մնացել սովամահ լինի. ամբողջ 5 օր հաց չեն ստացել։ Ցրտերի և ճանապարհների փակման պատճառով այստեղից գնացողները կատարեալ յուսահատութեան մէջ են, հարիւրներով կը փախչեն եթէ խրախուսողներ լինին...։ Զօրքերի իրերը և ռազմամթերքը տեղաւորելու համար Թիւրք թէ հայ քիրաջիների տունը այս տարի քանդեցին. տփելով ձիերը առնում և տանում են. պատահել է դէպքեր, որ ձիերի տէրերը իրենց ձեռքով սպանել են իրենց ձիերին որ գէթ կաշին հօս իրենց մնայ, որովհետև կըսեն չը պիտի խնամեին և ճանապարհին բնական կերպով պիտի սատկին...։ Սա մեծ հարուած է մասնաւորապէս վանեցի Թիւրքերի համար. նրանց աշխատանքի միակ ասպարէզը քիրաջիութիւնն է, ամբողջ ամառը չը կարողացան աշխատիլ. ստիպուած են ձիերը գաղտնի տներում պահել, որպէսզի ձեռք չընկնի...

Արդէն վերև ասացի որ ցորենները կառավարութիւնը գրաւում է և թոյլ չի տալիս որ ծախեն։ Այս բոլորից յետոյ Թիւրք ժողովրդի գլխին ծանրացաւ և մի նոր աղէտ. հրաման է եկել բոլոր վիլայէթների րէտիֆների (պահեստի) հաւաքման համար։ Երեք տարի շարունակ լսում ենք այս լուրը, բայց այս անգամ լուրջ է. ուղղակի Թեզքէրէներ են բաժանում. մի քանի տեղ արդէն հաւաքել են։ Երևակայեցէք Թիւրք և քիւրդ երկրագործ գիւղացիների վիճակը։ Զօրքերը ուժով մտնում են գիւղերը հաւաքելու պահեստի զօրքերը։ Գիւղերից մեծ մասամբ փախչում են, լեռնային մասերում զօրքերը երբ տանը չեն գտնում րէտիֆին, նրա եզը բերում գետին են ձգում սառելով. „Եթէ չը գայ, պիտի մորթենք", և քանի տեղ մորթել են։ Երբ այս ձևով

էլ հնարաւոր չի լինում գտնել, թալանում են տունը, ծեծում կանանց ու երեխաներին ու գնում իրենց գործին։ Այս ուղղութեամբ սարսափելի դէպքեր են պատմում գաւառներից եկողները...։ Դժո՞խք է, դժոխք, այս երկիրը, այժմ ոչ մի ազգ կամ ցեղ ազատ չէ...։

Քիւրդ համիտիէների բոլոր ազաներին էլ հեռագիր է եկեր, պատրաստուելու պատերազմի համար։ Մի մեծ փոթորիկ էլ աշիրաթների մէջ է առաջ եկել. ժողովներ են անում, մտքերի փոխանակութիւններ կան, մարդ չը գիտէ թէ ի՞նչ են մտածում։ Վերջերս զարմանալի զուգադիպութեամբ և արագութեամբ քիւրդ թշնամի ցեղերը իրարի հետ հաշտւում են։ Հայտարարագիները, որ 6—7 կօլի (մասի) էին բաժանուած՝ հաշտուել են։ Նրանք միայն 3000 կռուող կարող են հանել։ Յամենայն դէպս լաւ հոտ չի գալիս, Լաւերը են պատում որ իբր թէ ազաները հեռագրել են միշիրին, որ մենք մեր տեղից հեռանալ չենք կարող, որովհետև հայ ֆեդայիները մեր երկիրը կ՚աւրեն։ Նոյնիսկ կեղծ դէպքեր են սարքում, ցոյց տալու համար ֆեդայիների ներկայութիւնն ու վտանգաւորութիւնը։

Ահա ընդհանուր մթնոլորտը պատերազմի լուրերի շուրջը։ Ամեն օր սարսափելի լուրեր են խօսւում շրջում. մտքերը յուզած են։ Պարսկաստանից հողեր խլելու յիմար գործողութիւնները ոչ մի ոգևորութիւն առաջ չի բերում թիւրք ժողովրդի մէջ։ Շատերից կը լսենք „հող ինչ պիտի անենք քանի օրենք և արդարութիւն չը կայ մեր երկրում։“ Ամենքը մի մեծ փոփոխութիւն են սպասում։ Ամենասովորական իներտ խաւերն անգամ կառավարական փոփոխութեան անհրաժեշտութեան և սահմանադիր ժողովի մասին են խօսում։

Մոռցայ յիշել որ սահմանադրուելս դնացած կօմիսիան մի զինուորական ատեան ունենալով քննել է դէպքի պատճառները և ի զարմանս աշխարհի գրել է որ դրա ամբողջ յանցանքը հինգ զաբիթների (սպաների) վրայ է ընկնում։

Այսպէս է երկրի ընդհանուր կացութիւնը. թիւրք շարժման անյաջող ելք. պատերազմ և զօրաշարժ, սով և անբերրութիւն. մահ և գաղթականութիւն, յուսահատութիւն և լքում ամեն կողմը, ու մենք այս բոլոր անպատեհութիւնների հանդէպ անզօր։ Ի՞նչ անենք, ո՞ւմ դիմենք, ի՞նչպէս յուսադրենք ժողովրդին, այս սոսկալի ձմեռն ի՞նչպէս անցկացնենք, ահա մեր տանջանքների աղբիւրները...։

Չեմ կարող և մի քանի խօսք չասել առհասարակ հիւպատոսների և մասնաւորապէս ռուսական հիւպատոսների արած սխրագործութիւնների մասին։

Պատերազմի շշուկները բոլորին գործի է դրել. տեղիս անգլիական հիւպատոսը գնաց պարսկական սահմանները, ապա թիւրք-ռուսական սահմանները։ Առ այժմ Բիթլիսում անգլիական հիւպատոս չը լինելով, Դիարբէքիրի և Խարբերդի անգլիական հիւպատոսները այցելել են Բիթլիսի և Էրզրումի հայ գիւղերը։ Պատմում են որ սոսկալի եղեռնագործութիւնների և բռնաբարումի փաստերի են ականատես եղել և արձանագրութիւններ կազմել։ Դիմել են յեղափոխական մեր ընկերներին, առաջարկել են յեղափոխական գործունէութիւնը գէթ մի տարով դադարեցնել, խոստանալով ա ն պ ա յ մ ա ն բարեփոխութիւններ մտցնել։ Հիւպատոսները շատերին հաւատացնում են, որ գարնան անպայման բարեփոխութիւն կը լինի։ Մեր յեղափոխական ընկերները հարկ եղած պատասխանը տուած են։ Շատ վերապահութեամբ յայտնում եմ մի փոքրիկ դիտողութիւն։ Մեզ մասնաւորապէս թւում է որ այս տարւայ թիւրքական շարժումները և հայ թիւրքական համերաշխ գործունէութեան ուրւականը և դրան հետևող համապետական յեղափոխութեան հնարաւորութիւնը, սարսափեցրել է եւրոպական դիպլոմատիային։ Գէթ հիւպատոսների շարժումները ու փութկոտութիւնը և առատ խոստումներն այդ ուղղութեամբ խոհեր են պատճառում... մեծ հետաքրքրութեամբ և ուշադրութեամբ հետևում են այդ շարժման։ Մեր և թիւրքերի թերթերն ու թռուցիկները թարգմանաբար ուղարկում են Պօլիս... Յամենայն դէպս մի նոր շարժում կայ դրանց մէջ... Ձեր եւրոպական կաբինէտներին ուղղած հեռագիրը Վանի մէջ „երջանկայիշատակ“ Ալի-բէյի ձեռքով տեղի ունեցած խժդժութիւնների մասին, պատճէնը ուղարկուած է տեղիս ֆրանսիական հիւպատոսին ստուգելու համար գրուած փաստերը. հասկանալի է թէ ի՞նչ պատասխան պիտի տրէր՝ „Ցուները քանդելը ու գերանները առնելը պարտքերի փոխարէն չափազանցութիւն է. քանդուել են անմարդաբնակ տները!!!! „աշխարների և երկրագործական գործիքների ծախելու մասին այն ժամանակ կը խօսէին բայց չի ստուգւում“... Եւ այս բոլորը Վանում նստած, առանց գիւղեր գնալու, առանց ժողովրդից հարցնելու։ Այսպէս են իրենց „բարձր“ պաշտօնները կատարում եւրոպական տիպլոմատիական ներկայացուցիչները... Եւ դեռ սրանցից բան սպասողներ կան...։ Աւելի հռչակաւոր են ռուսական հիւպատոսները։ Երևի լսել էք Թիֆլիս Շիրկովի մասին, մի շատ սառ և թիւրքամոլ չինովնիկ. նրա սիրաղործութիւնները Զաւրևի ձեռնարկի, նրա թողած նպաստից դրամները ուտելու և հսմանուհիների հետ քէյֆ անելու և անցեալ տարւայ „թարքի-թապիայի“ հաւատափոխութեան մեծ հոսանքը միայն դրան են վերագրում. և ի մեծ զարմանս մեզ... իբր թէ ռուսաց կառավարութիւնը խաբար չէ ունեցել. իբր թէ այդ գործողութիւնները Շիլկովը ինքնագլուխ է արել. և ի փոխարէն այս բոլորի Շիլկովին այս աշնան հրաժարեցրել են պաշտօնից։ Տեղիս ռուսական հիւպատոսը գնաց մինչև Դիարբէքիր ու Մուշ։ Ինչ որ ռազմական պլանների շշուկներ կան այդ միսիայի մէջ...։

Չի կարելի մոռանալ կամ ներել ռուսական հիւպատոսների (կամ գուցէ կենդրոնական կառավարութեան) անմարդասէր և անսիրտ վերաբերմունքը դէպի այն ռուսահպատակները, որոնք իբրև յեղ. քաղաքական բանտարկեալներ տառապում են Ցաճկատանի բանտերում։ Սասունի ապստամբութիւնից մի տարի առաջ 1903 թ. Էրզրումի բանտը դրեցին 6 թէ 7 ռուսահպատակներ. նրանք մինչև այս՝ր էլ տառապում են Էրզրումի բանտում. հիւպատոսը և ոչ մի ուշադրութիւն չը դարձրեց... Սասունի ապստամբութեան օրերը ձերբակալեց Մշոյ դաշտում նուխեցի Գրիգոր Միրզաբէգեանը, նա մինչև օրս առանց քննութեան տառապում է Մշոյ բանտում։ Շիլկով յայտնել է իր դաւաճան թարգմանի միջոցաւ նրան, որ ռուսաց կառավարութիւնը չի ճանաչում և չի պաշտպանի յեղ. հպատակներին։ Այո՛, վաղուց դիտէինք այդ, այն էլ ոչ թէ Ցաճկատանում, այլ ձեր „ազատ Ռուսաստանում...“ Մենք միամտութիւն ունէինք կարծելու որ Շիլկովը մի բացառիկ սրիկայ է, որ նա իր անհատական լիրբ կնիքը դնում է գործերի վրայ, բայց... բայց Վանի ներկայ ռուսական հիւպատոսը վերամկրտեալ ֆրանսիացի պ. . . . . նրանից յետ չը մնաց։ Անցեալները զօրքերը բռնեցին Աստուածածին գիւղում Գանձակ նահանգի Բանանց գիւղացի Ստեփանին պատահական կերպով։ Նրան սոսկալի կերպով ջարդելուց յետոյ բերել ձգել են Վանի բանտը, այն էլ փօլիս։ Տուած տանջանքները չափ ու սահման չունին։ Խեղճը դիմում է տեղիս հիւպատոսին և խնդրում որ իրեն պաշտպանէ։ Հիւպատոսը պատրւակում է նախ որ վալին դեռ իր մասին լուր չի տուել իրեն. իսկ երբ այդ պաշտօնական լուրը առնում է, երկրորդ պատրւակը լինում է այն, որ անցագիր չունիս... Վերջ ի վերջոյ երբ խեղճ Ստեփանը տեսաւ որ հնար չը կայ, կարծեմ առաջարկել է իր մօտ եղած 2 ոսկի դրամը դնել հիւպատոսի տրամադրութեան տակ իբրև հեռագրի դրամ և խնդրել է ստուգել իր ռուսահպատակ լինելը։ Ի՞նչ ասել կ՚ուզի, այս պայմանը ընդունում է. արդէն հեռագրել են. տեսնենք Գանձակի բիւրոկրատիկ սոտիկանութիւնը երբ կը բարեհաճի պատասխանել... մինչ այդ մեր երկու ոսկիանոց հիւպատոսը մատը մատին չի տալու իր հպատակին պաշտպանելու համար։

Աւելին ապասել աւելորդ է։ „Սվետի“, „Նովոյէ Վրեմիայի“, „Կավկազի“ երկրպագու ռուս հիւպատոսները միայն մտածում են հայակերութեան մասին և առ հասարակ քէֆի, խմելու (չէ որ Ցաճկատանում արտասահմանեան խմիչքները շատ էժան են, ռուսաց հիւպատոսների քէֆին քէֆ չի հասնի, միշտ խմած կը տեսնէք...) և սրսորդութեան մասին...։ Շատ լեզուները խօսում են, որ տեղիս

ռուսաց հիւպատոսը նոյնիսկ ռուսերէն անսխալ գրել ու կարդալ չը գիտէ. պաշտօնը ստանձնել է իր կնոջ բարեկամների ազդեցիկ միջամտութեամբ, իսկ պաշտօնական գրութիւնները և արձանագրութիւնը պատրաստում են կինը կամ թարգմանը։ Ահա ձեզ եւրոպական դիպլոմատիայի ծաղիկները...։

Ահա ձեզ մեր թշւառ վիճակի թոյլ նկարագիրը...։

ՏԻԱՐՊԷՔԻՐ, 22 Յունւար

Քաղաքիս մէջ սրտաճմլիկ տեսարան մը կը պարզւի։ Պիթլիսէն, Մուշէն և Սասունէն 5000 է աւելի գաղթականներ եկած են հոս, ծայրաստիճան աղքատ և թշւառ, որոնք մահւան ճիրաններէն ազատելու համար գերմարդկային և ոգի ի բռին ջանքեր են հարկաւոր։ Եթէ շուտով օգնութիւն չը հասնի մահը անվրէպ չարդ ու փշուր պիտի ընէ այդ թշւառները։

Տեղիս ժողովուրդը զզւած է առաջնորդ Եղեկիէլ վարդապետէն որ, ընդունակ ամէն ստորնութեան և դաւաճանութեան, իրական չարիք մը եղած է ժողովրդի գլխին։ Արդէն հաստատ լուրեր կը շրջին որ շատ մը հայեր կը պատրաստւին կաթոլիկութեան դիմել այդ անարժան եկեղեցականի ձեռքէն ազատելու համար։ Եթէ մաքուր և արժանաւոր եկեղեցական փութով չուղարկւի, շատ հաւանական է որ ժողովրդին համբերութիւնը հատնի և երթայ կաթօլիկութեան գիրկը նետւի։

ԵՐԿՈՒ ԳԵՐԵԶՄԱՆ

„Արջք օրհասականք ընդ վախճանիլ ճնչոյն՝ հզօրագոյնս կռուին“։

Թւում է, թէ XX-րդ դարը ըմբոստանում է այլեւս իր ծոցում սնուցանել անցեալ դարերը քիչեցնող սանձարձակ միապետութիւններ...

Մարդկային պատմութեան էվօլիւցիայի անսասան օրէնք... պրոգրէսի, առաջադիմութեան սքանչելի՜ խոյանք...

Սրանից ճիշտ չորս տարի առաջ էր, երբ ասիական բռնակալութեան մի տիպիկ խելագար գլուխ,—ռուսական կամարիլան, օրէցօր, ժամ առ ժամ աճող, և սարսափելի պայթման կասկածներ տւող ներքին դժգոհութիւնները զսպելու նպատակով, հայրենասիրական զգացումները վառելու պատրւակով, և որ ամենէն գլխաւորն է, առհասարակ Բիւրօկրատիային յատուկ բազմակուլ որկորը լեցնելու դիտումով, վճռեց գլուխը Ծայրագոյն Արեւելքի ժայռերին զարնելու...

Մարդկային այդ սպանդանոցի մէջ էր, որ ներքին խռովութիւնները փոխանակ վերջանալու աւելի ու աւելի սաստկացան, յեղափոխական ոգու թափը նոր ու նոր թռիչքներ առաւ, ժողովրդական դժգոհութեան բաժակը լեցւել սկսաւ. ընդհանուր աղէտի մէջ կեանքն ու մահը բաժնող անջրպետը վերացաւ և հրդեհը ժամանակից շատ առաջ սկսաւ, դարաւոր ստրուկը արդարութեան ջահը կը խլէր...

Ու այդ օրից սանձարձակ միապետութեան թաղման վեհաշուք ծէսը սկսաւ... Կամարիլայի տիպիկ ներկայացուցիչ Պլէվէների շարքերը դիտապաստ՝ մայրաքաղաքների և գլխաւոր քաղաքների սալայատակների վրայ արիւնլւայ գետին փռւեց, լայնածաւալ կայսրութեան ամբողջ սահմաններում քաղաքական ու տնտեսական ցնցումներն ու ջղաձգութիւնները հետզհետէ աւելի ուժեղ ձեւերով բաղխւեցան... և դեռ շատ երկար պիտի շարունակւին, միշտ աւելի խրոխտ, աւելի ուժեղ յորձանքներով... մինչև որ հնի հետքն անգամ չը մնայ... որքա՜ն ստեղծագործող, բայց և միևնոյն ժամանակ, որքա՜ն կործանիչ դեր է կատարում նմանութեան օրէնքը...

Հիւսիսային արջի օրինակը շատ էր վարակիչ, նրա վիճակը շա՜տ էր հրապուրիչ...

Եւ Եըլդըզի արիւնռուշտ կամարիլլան ներկայ մոմենտում նմանութեան հրաշալի դասեր է առնում...

Այն ժամանակ, երբ սուլթան Համիդի 30 տարւայ ռադպյէլական թագաւորութեան միջոցին ամենալաւ երկրների մեծ մասը առատաձեռնութեամբ արդէն բաշխւել են օտարներին.

Այն ժամանակ, երբ մնացեալ ողջ երկիրը երկաթի բռունցքի տակ արեան արցունքի հովիտ է վերածւել, երբ մարդկային լէշերի գարշելի հոտ է փչում ողջ երկրի վրայով.

Այն ժամանակ, երբ ներքին խլրտումները օրէցօր բազմապատկւում են և լայն յորձանքներով ժողովրդական աւելի ընդարձակ խաւերը ընդգրկում.

Այն ժամանակ, երբ բիւրօկրատիան դրամական ամենաանցուկ կրիզիսի մէջ շշմել է, երբ անբան անասուններից շատ աւելի դժբախտ կայսերական զօրքը մերկ ու անօթի իր հազիւ բուսական կեանքն է քաշքշում օրէցօր, իսկ ամենափոքր տրտունջները արեան մէջ են խեղդւում։

Այն ժամանակ, երբ սովը, այդ բոլոր իվերուստ եղած հալածանքների անխուսափելի հետևորդը թևատարած սլանում է ողջ կայսրութեան մի ծայրից միւսը, արևելքից արևմուտք, հիւսիսից հարաւ և վերջապէս.

Այն ժամանակ, երբ Եւրոպայի խորամանկ դիպլոմատիայի, մանաւորապէս փադիշահի հարազատ եղբայր Վիլհելմ կայսեր երկաթէ գօտին ամուր, խիստ ամուր պարփակում է շշմած Եըլդըզի արիւնարբու, նուրբ, չափազանց դիւրաբեկ մէջքը... Երբ գերմանական երկաթուղին օձային սուլոցով սողում է կայսրութեան մի ծայրից միւսը—Կ. Պոլսից մինչև Բաղդատ—Բասրա լիզելով անթիւ հարստութիւն պարունակող կուսական լեռների և անտառների փեշերը...

Նոյն այդ ժամանակ Եըլդըզի ջղագար մեծ մարդասպանը այդ բոլորը յատկապէս իրեն գլխին պայթելու պատրաստւող փոթորիկները առժամանակ գէթ մոռցնել տալու համար ծրագրում է մի ապուշ հանճարի ստեղծագործութիւն...

Պատերա՞զմ պարսիկների դէմ...

Խեղդե՜լ պարսկական մանուկ սահմանադրութիւնը հէնց իր խանձարուրի մէջ... Նրա ուրւականը շա՜տ է արիւն պղտորում...

Գուցէ դրանով զբաղեցնի մտքեր, և մանաւորապէս դրդւի մոռացման ֆանատիկոս հայրենասիրութիւնը...

Ջո՜ւր յոյսեր... ո՛չ մի ոգևորութիւն...

Իսկ դժգոհութիւնը տիրող ռէժիմին դէմ ամբողջ կայսրութեան մէջ աւելի ու աւելի հսկայական ծաւալ է ստանում...

Եւ մինչ Եըլդըզի աւազակախումբը զբաղւած է դիպլոմատիքական բազմակնճիռ խնդիրներ լուծելու. մինչ նա անուրջների մէջ ընկղմած ծրագիրներ է մտմտում դիւրին ճանապարհներ ձեռք բերելու 6-րդ զօրաբանակը դիւրութեամբ հաղորդակցութեան մէջ դնելու 4-րդ զօրաբանակի հետ,—երևի հիւսիսային արջի հետ չափւելու մղձաւանջով է տառապում—և ես ինչ գիտեմ էլ ինչ խելացնորութիւններ...

Թո՛ղ երկիրը, Տաճկաստանի ժողովուրդները առանց ցեղի ու կրօնի խտրութեան խմբւեն մի նոր խմորով... Թող տառապող ժողովուրդների սրտերը բոցավառւին մի նոր կրակով և շարունակեն արդարութեան սրբազան կռիւ աւելի ուժեղ ձևով։ Մինչ, ասում ենք, Եըլդըզի դիւահարը երեւոյթները փրկելու պալլիատիւների մասին է իր ուղեղը փորում...

Ջա՛րկ, Արաբիա, քո միսիան մեծ է լինելու օսմանեան պատմութեան մէջ, թող լինի նաև քու սկսած կռիւը բռնակալութեան դէմ.

Զա՛րկ, Մակեդոնիա՛... անախրօնիզմ է ազատ Եւրոպայի ազատ փեշերի տակ, գեղեցիկ Բալկանի ազատ իշխանութիւնների տաք գրկի մէջ քո աքիւն-արցունքոտ վիճակը...

Զա՛րկ, Ալբանիա, զա՛րկ քո պատմական ապետական համարձակութեամբ։

Զա՛րկ, Կարին, դու աւանդարտը եղար Օսմանեան դարևոր ստրկութեան տակ ճզմւած թշւառ ժողովրդեան խըրոխտ ըմբոստացումին...

Զարկէ՛ք բոլոր հալածւածներ, բոլոր ճնշւածներ Օսմանեան պետութեան առանց ազգի. առանց ցեղի, և առանց կրօնի խտրութեան, զարկէ՛ք միասին, շարքերը խիտ սեղմած բռնակալութեան արնոտ երեսին.. զարկէ՛ք չեչտակի թունոտ ալաքներ նրա զառամած գլխին..

Եւ այդ ընդհանուր գոռ համազարկերը թո՛ղ սարսափելի և համայնակուլ մի հրդեհ ծնեն, և այդ ամեն ինչ լափող եռման լաւաների մէջ.

Դո՛ւ Եըլդըզի խելացնոր ճիւաղ, դո՛ւ նոյն ճիւաղին երկրպագու անբարտաւան կամարիլլա և դու խեղճ ժողովրդեան արիւնը ծծող անառակ բիւրօկրատիա։

Երբ ընդհանուր սարսափելի հրդեհի մէջ ձեր հսկայ կառուցւածքի փլատակները միայն մնան — որպէս մի փիւնիկ կը ծնի նորը՝ „Երիտասարդ Օսմանեան պետութիւն“ և բոլոր ազգերը ու բոլոր ցեղերը ձեռք-ձեռքի տւած, համերաշխութեան փրկարար ուղիով կը դնեն հիմունք մի նոր պետութեան, ֆեդերատիւ սկզբունքներով, որից ոչ մի մարդ չի համարձակի խլել կտոր հող, ուր էլ չի լինի արիւն ու արցունք, ուր մարդ արարածը չի հալածւի անբան անասունին, ուր խաղաղութեան և արդարութեան մէջ կը ծաղկի մեր երկիր նոր ուժ-կորովով, կսկսի ազատ ժողովրդեան ստեղծագործական — կուլտուրական հսկայ աշխատանք...

Դէ՛հ ուրեմն դէպի գործ. կայծերը բորբոքենք, փայտը շա՛տ է խռիւ, իրար մօտ բերինք, նորի՛ց արծարծենք, մի հսկայական, մի աստւածային հրդեհ պատրաստենք...

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՔ

—

ՄՈՍԿՒԱ, փետրւար 10

Կուլտուրական պրօպագա՛նդ... Այս է այժմ ամենատարածւած լօզունգներից մինը՝ Կայսրութեան կենտրօններում ու ծայրերում։ Նա գնում է ձեռք-ձեռքի տւած „ստորերկրեայ“ աշխատանքի հետ, որ մղւում է առանց երբէք թուլանալու զարհուրելի հարւածներից — բանւորների, գիւղացիների ու ինտելիգենցիայի շարքերում։

Հարւածներ շատ է ստանում և խաղաղ, կուլտուրական աշխատանքը։ Լեհական „Մատիցայի“ մասին լսել էք արդէն։

Ռուսաստանի ամենախոշոր կրթական հիմնարկութիւններից մինն էր, — փակւեց Սկալօնի բռնակալ հրամանով։ Ընդամենը երկու տարի առաջ հիմնւած այդ վիթխարի դպրոցը աճում էր առասպելական արագութեամբ, տարածւում էր գիւղերի ու քաղաքների մէջ, ցանցով պատում էր ամբողջ Լեհաստանը, — մի հանգամանք, որ պարզ վկայում է, թէ որքան սուր է ուսման ու կրթութեան ծարաւը ժողովրդական լայն խաւերում։ Լեհերը չեն կարողանում հաշտւել կատարւած իրողութեան հետ։ Այդ հիմնարկութիւնը նրանց ազգային պարծանքներից մինն էր և ռուս բռնակալութեան կարգադրութիւնը նրանք համարում են մի ծանր պ ր օ վ օ կ ա ց ի ա, որ անշուշտ կունենայ իր բնական անդրադարձումները...

Խոչընդոտներ կուլտուրական աշխատանքի առջև դնում են ամեն քայլափոխում նաև բուն Ռուսաստանում։ Սակայն հոսանքը դարձեալ ճանապարհ է գտնում հազարաւոր թումբերի միջից և հեղեղում է ամբողջ երկիրը։ Դա մի ահագին, վերին աստիճանի մխիթարական երևոյթ է — ժողովրդական մասսաների այդ կազմակերպումն ու դաստիարակութիւնը, համաձայն ժամանակակից աշխարհհայեցութեան։ Կարևոր է ոչ միայն քաղաքական շարժումը ինքն ըստ ինքեան, այլ և աշխատաւորների այդ մարզութիւնը՝ ազատութեան դպրոցների մէջ, արհեստակցական ընկերութիւն, կօօպերատիւները և այլն, որոնք այդ շարժման անսպառ աղբիւրն են։ Աշխատաւորական սինդիկատները չէի՞ն որ այնքան մեծ դեր խաղացին երկու տարի առաջ յեղափոխութեան յորձանքի մէջ... Այժմ այդ նոյն կազմակերպութիւնները դառնում են կորիզներ մի հսկայական մտաւոր խմորման։ Անթիւ են ակումբները, ուր դաստիարակւում են ժողովրդին, ամենաբազմազան նիւթերի մասին — թէ Ռուսաստանում, թէ ծայրերում։ Անթիւ են ժողովրդական համալսարանները, որոնց յաճախորդների մեծագոյն տոկոսը աշխատաւորներ են։ Այստեղ, Մոսկւայում ժող. համալսարանը անցեալ տարի ունեցել է մօտ 100,000 յաճախորդ։ Սովորութիւնը տարածւում է և մտնում հեռու ծայրագաւառները, մեր գժբախտ Կովկասի մայրաքաղաքը ևս վայելում է այսօր ժողովրդական համալսարանի բարիքները...

Մեր միջնադարեան բիւրոկրատիան, անտարակոյս, սրտի կսկիծով է նայում նմանօրինակ հաստատութիւնները թէև յաճախ էլ իր բռնաւոր թաթն է դնում նրանց վրայ։

Բայց աւելի յաճախ նա ստիպւած է հանդուրժել, ինչպէս որ հանդուրժում է մամուլի կիսատ պռատ ազատութիւնը... Ո՛չ, դարձը դէպի հին, կլասիկ ռէժիմը, դէպի Պլեվէյի վայրագ բռնապետութիւնը — այլևս անհնարին է, թէև ցարն ու Ստօլիպինները այդ յոյսով են ապրում։ Այժմ էլ թերևս մտածում են մի ահագին „դիվերսիա՝ անել — Տաճկաստանի հետ պատերազմ սկսելով, վառել նորից ռուս ժողովրդի հայրենասիրական զգացմունքները, շեղել նրա ուշադրութիւնը „ներքին գործերից“ և մի „փայլուն“ յաղթանակով վերստին բարձրացնել ցարիզմի հմայքը, վերստին տալ նրան կատարեալ ազատութիւն...

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ. — Արևելեան հարցը, նորէն հասունցած կամ թարխոտած, վերաբացւելու նախօրին կը գտնւի։ Մակեդոնական խնդիրը՝ ուրկէ „Եւրոպան բռնկցնող կայծը կարող է ցայտել“, հրատապ այժմէութիւն և զարկ կուտայ արևելեան ճգնաժամին, որ փորձաքարը կը հանդիսանայ շահերու խուլ հակամարտութեան մէջէն ծայր տւող քաղաքական հեռաւոր նկատումներու։

Եւրոպական ա ն ն ե ր դ ա շ ն ա կ նւագը, դեռ չէր կրցած խաղաղացնել Մակեդոնիան և հոն կայուն և բարւոք վիճակ մը հաստատել, հակառակ իր ներկայացուցիչներուն, որոնք պաշտօն ունէին աչալուրջ հըսկել ծրագրւած բարենորոգումներու գործադրումին։ Սուլթանի չկամութիւնը, Գերմանիոյ և Աւստրիոյ յայտնի կամ ծածուկ քսութիւնով, կողմնակի ինդրիկներ, արիւնը մէջը մեռցուցին բարենորոգումներուն, որ գրեթէ իր „տեսական“ և վերացական բնաւորութենէն դուրս չեկաւ։

Սուլթանը կը պահանջէ որ բարենորոգումներուն հսկող եւրոպական ներկայացուցիչները իր ծառայութեանը մէջ մտնեն և ինք վճարէ անոնց թօշակները, որով իբր թէ աւելի „հմայք և հեղինակութիւն“ պիտի վայելեն ժողովուրդի աչքին։ Համիդի ժամավաստակ խորամանկութիւնը չէ վրիպած դեսպաններու աչքէն, որոնք բացարձակապէս կը մերժեն այդ առաջարկը, սակայն հարցը միշտ կը գտնւայ յոռեշրջանի մը մէջ, առանց մազի չափ շեղելու իր ամուլ հակաճառութիւններէն։

Աւստրիոյ թատերական հարուածը խլելով Նովի Պազարի գծի արտօնութիւնը մեծ գոռգոչ բարձրացուց, մանաւանդ ռուսական մամուլին մէջ, որ իրենց „սլաւ եղբայրներուն“ դատը պաշտպանելէ չեն կշտանար։ Ռուսները Աւստրիոյ ետև կը տեսնեն Գերմանիոյ մատը։ Տխրահռչակ Սուվորին սուլթանի „վէզիրը“ կանուանէ Պոլսոյ գերմանական դեսպանը։ Նոյնը չէ՞ը ըներ միթէ հռչակաւոր Նելիտովը, երբ Աբդիւլ Համիդի հետ եղբայրացած, հայերու արիւնին հոտը կըմբոշխնէին միասին։

Ցայտնի է թէ Աբդիւլ Համիդ „էն նենգամիտը ժամանակակից դիւանագէտներուն“, ինչպէս կըսէ անգլիական թերթ մը, ներկայացած առիթը չէր ուզեր փախցնել գժտութեան ծաղիկը նետելու եւրոպական նաւագին մէջ, ինչպէս ալ ըրաւ։

Սակայն որքան հեռատես էր իր խորամանկութեան մէջ, ապագան ցոյց պիտի տայ։ Իրողութիւնը այն է որ դրութիւնը ծանրակշիռ ըլլալ կը թւի Թիւրքիոյ համար։ Անգլիական դիւանագիտութիւնը կը զգացնէ որ ինք, եթէ նաւագը իսկ քայքայուի, պատրաստ է առանձին ձեռք առնել Մակեդոնիոյ հարցը և լուծել։

Քանի մը օր առաջ ևս անգլ. խորհրդարանին մէջ արտաքին գործոց նախարարը, աւելի ընդլայնեց նիւթը ըսելով. „Մակեդոնիոյ հարցը մօտէն կը շօշափէ Թիւրքիոյ հարցը, որ մէկէ աւելի անգամներ պատերազմի առաջնորդած է... Եթէ նաւագը քայքայուի չէ կարելի ըսել ինչ թիւրիմացութիւն կարող է ծագիլ... Մակեդոնիան երեսի վրայ ձգուելով ուշ կանուխ մեծաղէտ առաջ կրնայ գալ“...։

Արտ. գործ. ենթաքարտուղարը Ֆից Մորիս աւելի շեշտ և վճռականութիւն կը դնէր իր լեզուին մէջ։ „Օսմ. կայսրութեան դրութիւնը, ընդհանրապէս, ամենամեծ անհանգստութիւն կը պատճառէ մեզի. արդեօք չէ՞ եկած բոպէն, ուր նոյնիսկ Թիւրքիոյ օգտին համար յարմար պիտի ըլլար աւելի ազդու միջոցներ ձեռք առնել Մակեդոնիոյ մէջ, չէ՞ եկած արդեօք ժամանակը Լիբանանու պէս անկախ և անխախտ կառավարիչ մը կարգելու համար... Շատ ճգնաժամային փուլի մը հասած ենք Մակեդոնիոյ, եւրոպական նաւագի և դիւանագիտական տեսակէտով...“

Անգլիան ամբողջ Արևելեան հարցն է որ կը սպառնայ դնել Եւրոպայի առջև։ Գերմանական մամուլը, վտանգ կը տեսնէ Անգլիոյ պաշտօնական յայտարարութեան մէջ։ Անգլիոյ կը ձայնակցին Ռուսիան, Ֆրանսիա և Իտալիա։

Ահա այն տարօրինակ և անելանելի դրութիւնը որ ստեղծեց Ապդիւլ Համիդի պէս լաղճուկ և սրիկայ փատիշահը, որուն գազանային և եղեռնային ժամանցները այս ամենագժբախտ և ահարկու դրութեան հասցուցին երկիրը և ժողովուրդը։

„Հիւանդ մարդը“ կը մտմտայ...։

*

ՌՈՒՍՕ-ԹԻՒՐՔ.—Ռուս-Թիւրք պատերազմի լուրերը յամառօրէն կը պտտին և կզբաղեցնեն մտքերը։ Ռուսական մամուլը լայն տեղ կը նուիրէ այդ լուրերուն՝ շեշտելով ու ծանրանալով Թիւրքիոյ անդուլ պատրաստութիւններուն վրայ։ Եւրոպական մամուլը ևս լուրջ կարևորութիւն կուտայ և գերմանական մամուլին մէջ մինչև իսկ „պատերազմը մօտալուտ“ ըլլալուն հաւանականութիւնը կը շեշտուէր։

Թիւրքիա պաշտօնապէս կը հերքէ ըսելով թէ ինք ոչէ „պատերազմական ծրագիր“ չունի դիպի Ռուսաստանը և այդ աղմուկներու ծագումը կը վերագրէ... հայ յեղափոխականներուն։

Տարօրինակ զուգադիպութիւններով մը—կարծես ցարը և սուլթանը իրարու բերան թքած ըլլային—Ռուսները ևս հայկական ինդրիկներու կը վերագրեն ռուս-Թիւրք պատերազմի լուրերը։ „Միւսիւլման քրիստոնեայ աշխարհներու կռիւը, հայերու քաղաքական նպատակին կը ծառայէ միայն“, կը հաւաստէ ստախօս „Նովոյէ Վրէմիան և... հրաման կընէ որ պատժեն հայերը որպէսզի զսպեն „հայկական ինդրիկների միտումները“։ „Նով. Վրէմիան“, որ կոյտ մը աղբի պէս կը շողշողայ ռուս գաղափարական աշխարհին մէջ, չը վարանիր նաև յայտարարել որ „Թիւրքիան արհամարական դիրք է բռնել դէպի Ռուսաստանը“։ Բայց հայկական ինդրիկները հապա... Սուվորինը մեզի կը հասկցնէ որ հայերը երկու գահեր սասանեցնելու չափ ահարկու են։ Եթէ Սուվորինը գոյութիւն չունենար, պէտք է հատ մը ստեղծել նոյնիսկ ցեխէ, հայերու չարքաշ միսը շանպէս կրծելու համար։

Զինուորական պատրաստութիւններու շարժառիթը մէկէ աւելի են։ Թիւրքերը, որոնցմէ կը բխի նախաձեռնութիւնը—գոնէ երևոյթին—կը յայտարարեն որ Պարսկաստանի սահմանագլխի քիւրդերու արշաւանքները զսպելու համար է եղած զօրաշարժը։ Ուրիշ մեկնաբանութիւն մը՝ Ռուսաստանը վախցնելու համար է, որպէսզի ձեռք քաշէ Մակեդոնիոյ բարենորոգումներէն. այս կէտին մէջ իրեն զօրավիգ ունի Գերմանիան և Աւստրիան։ կամ Գերմանիոյ մէկ խաղն է որ, Թիւրքիան նետելով Ռուսաստանի դէմ, ինչպէս Ֆրանսան Մարոքի դէմ, կուզէ ապահովել իր դիրքը։ Ուրիշ ոչ նուազ հաւանական կարծիք մըն է և այն, թէ սուլթանը տեսնելով որ Թիւրքերու մէջ յեղափոխական շարժումը օրէ օր ծաւալ կստանայ, պատերազմի լուրը մէջտեղ նետած է որ սասանեցնէ զանոնք։

Սակայն այս բոլոր խաբուսիկ մեկնաբանութիւններուն ետև իրականութիւն մը կայ։ Կովկասի մէջ սուլթանի գաղտնի լրտեսները պինդ ման կուգան։ Ռուս լրագիրները սպառնալով հանդերձ Թիւրքիային, եթէ յարձակումի փորձ ընէ, չեն կրնար քօղարկել իրենց մտատանջութիւնը՝ Կովկասի մէջ համիսլամական շարժումի մը հետևանքները նախագուշակելով։ Ռուսները կարսի բերդը կամրացնեն։ Կովկաս ղրկուած են կարող զօրավարներ իրերու վիճակը մօտէն քննելու համար։

Պատերազմի շշուկները, իզէն աղաղակները, արդէն ձևականօրէն կը պատրաստեն և կը լարեն մտքերը։ Ռուսիոյ մէջ հզօր կուսակցութիւն մը կայ, որ կը մղէ պատերազմի... թերևս Ծայրագոյն Արևելքի աղէտը, Մօտաւոր Արևելքով փոխարինելու համար, կամ գուցէ բոպէն եկած կը համարի որ Արևելեան հարցը, և նոյնիսկ Թիւրքիոյ հարցը, իբր մղձաւանջ մը, վերաբացուի լուծելու համար ընդմիշտ։ Թերևս Անգլիոյ արտ. գործ. նախարարին կտրակի յայտարարութենէն յետոյ—ուրկէ սակայն պէտք չէ շատ յուսադրուիլ—

պէտք է ենթադրել որ Արևելքի մէջ պատմական մեծ յեղաշրջութիւն մը կատարուելու վրայ է այն օրէն իվեր, երբ անգլօ-ռուս համաձայնութիւնը կնքուեցաւ։

Պատերազմ մը սակայն, որ վաղ թէ ուշ, պիտի պայթի Արարատի շուրջը, ուր պատմական հայութիւնը կապրի և կերազէ, արիւնի և փորձութեան նոր թաւկան մը պիտի բանայ դժբախտ հայ ժողովրդի գլխին, և թերևս անոր բախտը պիտի վճռէ...

*

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—Մէճլիսի գլխաւոր հոգն էր Պարսկաստանը օժտել եւրոպական սիստէմի պիւդճէով մը, որ ուտող ուտողի չըլլայ և որոշեց Շահին թոշակ, որպէսզի պետական գանձարանը, մի անգամ ընդ միշտ, զանազանի Շահի ծախսերէն։ Շահը իրեն որոշուած պիւդճէն շատ ճղճիմ գտաւ, որով ստիպուած եղաւ ձրիակեր ծառաներու լէգէոն մը ճամբել։ Թէհրանի վերջին խառնակութիւնները, Մէճլիսը տապալելու փորձերը, մեծ մասով հետևանք էին այդ ձրիակերներու և սիրականներու դժգոհութեան։ Ազգայնականները (ազատականները) ճակատ տուին յետադէմ խաժամուժին և փրկեցին Սահմանադրութիւնը։ Այդ օրը նահանգներէն տեղացած քաջալերական հեռագիրները, ցոյց տուին որ պարսիկ ժողովուրդին մէջ որքան համակրելի է օրինաւոր և ազատական ըէժիմի մը հաստատութիւնը, որուն երազը և պապակը ունի Իրանի ժողովուրդը։

Յետադիմականները, ռուսականի նման սև հարիւրակներ կազմելով ուզեցին ահաբեկել Մէճլիսի ազդեցիկ պաշտպանները։ Ասոնց գործն էր Ֆէրիդունի, մեծահարուստ Պապիի սպանութիւնը Թէհրանի մէջ։ Միւս կողմէն էնճիւմէնները—գաղտնի ընկերութիւնները—եռանդուն գործունէութիւն ցոյց կուտային երկրին մէջ, ինպաստ Սահմանադրութեան և որոնց կեդրոնը կը թուի ըլլալ Թաւրիզ։ Ասոնց շարքերէն է որ դուրս կուգան յաճախ ֆէդայիներ։ Էնճիւմէնները դժգոհ են իրերու ներկայ դրութենէն և կը պահանջեն որ Մէճլիսը անխափան շարունակէ իր ազատարար բարեկարգումի դերը։ Դժգոհ են Շահէն որ հինգլուխ և կեղեքիչ մտերիմներով շրջապատուած է և մտիկ կընէ յետադիմականներուն, խեղդելու համար Սահմանադրութիւնը։ Թէև, Շահը, վերջին անգամ ըլլալով երդում տուաւ հաւատարիմ մնալու Սահմանադրութեան „սուրբ հաստատութիւն“ մը անուանելով զայն։

Ցուզումը սակայն կը շարունակուի թէ մայրաքաղաքին մէջ և թէ գաւառները։ Էնճիւմէնները ամբողջ երկրին մէջ ճիւղեր կարձակեն և կսպառնան երկրին ահարկու և հրամայող ուժը ըլլալ։

Նոյն ընկերութիւններուն կը վերագրեն, փետր. 18ի Շահի դէմ կատարուած սպաննութեան փորձը։

Շահը այդ օրը երբ Սարահապատի պալատը կը մեկնէր զբօսանքի համար—Թէհրանէն քանի մը մղոն հեռու—նեղ փողոցէ մը անցնելիս տանիքէ մը երկու ռումբ նետեցին։ Շահը անվնաս մնաց։ Մեռան միայն երեք հոգի և վիրաւորուեցան շատեր։ Շահը չը շարունակեց այլևս իր ճամբան և վերադարձաւ Սիւլիստանի պալատը։ Շահի հետևորդ զօրքերը, այդ բոպէին աջ ու ձախ կրակելով ժողովուրդին վրայ՝ սպաններ են 12 մարդ։ Ընդհանուր զոհերու թիւը 30 է։ Թէհրանի ժողովուրդը սաստիկ զայրացած է զօրքերու ընթացքի դէմ, որ ժողովրդին վրայ կրակ ընելով, այնքան անմեղներու մահուան պատճառ եղան։ Սպանութեան փորձի հեղինակները չեն բռնուած, տուներուն մէջ ոչ մէկ կասկածելի հետք չեն գտած։ Յարաբերութիւնը Շահին և Մէճլիսի միջև առանց ատոր ալ արդէն լարուած էր յետադիմականները կը մեղադրեն երեսփոխանները իբր հեղինակ այդ ոճիրին և կը դրդեն Շահը փակել Մէճլիսը և վերահաստատել հին կամայական ըէժիմը։

Սահմանագլխի վէճը յանձնուած էր յանձնախումբի մը կարգադրութեան որ պաշտօն ունէր... գործը աւելի բարդացնելու։ Թիւրքերը, վերջի պահուն անկլօռուս ճնշման տակ, ետ քաշեր են իրենց զօրքերը Սուճպուլագէն դէպի Թրքական սահմանագլուխը, ամէն բան արտուկալ և աւեր ընելէ յետոյ։

Սակայն Թիւրքերը դեռ իրենց գրպաններուն մէջ մէկէ աւելի հնարքներ և ծուռումուռ ճամբաներ ունին այդ խնդիրը ձգձգելու և պատեհ առիթին սպասելու համար։

ՎԱՆԻ ԴԷՊՔԵՐԸ

Վանի դէպքերու մասին, «Դրօշակի» խմբագրութիւնը բողոքի հետևեալ հեռագիրը ուղղեց եւրոպական մամուլին։

«Պոլսէն քաշուած հեռագիրը, նպատակ ունենալով պատրաստել եւրոպայի հանրային կարծիքը, կիմացնէ թէ նոր յարձակում մը եղած է Վանի հայ ժողովուրդին դէմ, և թէ հայկական թաղը կործանուած և բազմաթիւ զոհեր կան։ Ապդիւլ Համիդի գործակալները պատրաստակ կը բերեն ռումբերու, ուժանակի, զէնքերու և զինուորներու դէմ հայ յեղափոխականներու յարձակումի հինցած առասպելը։

Փաստ է թէ նոր եղեռն մը կատարուած է, որ ուրիշ բան չէ բայց եթէ կրկնութիւնը այն արիւնահեղ եւրոյթներուն, որոնք տասներկու տարիներէ իվեր աշխարհածանօթ են։ Արդէն երկու ամիսէ ի վեր հաւաստի աղբիւրէ մեզի յայտնի էր, որ Ապդիւլ Համիդ նոր հարուած մը կը պատրաստէր Վանի վիլայէթին մէջ ուր սկսած էր հայերու և թիւրքերու մէջ մերձեցում մը առաջ գալ։ Վանի նոր դէպքը այդ եղեռնական ծրագրին իրագործումն էր։

Պարտք կը համարինք, յանուն ճշմարտութեան, մերկացընել դաւադրական միջոցները համիդեան կառավարութեան որ, ոճիրը գործելէ յետոյ, կը ձգտի պատասխանատուութիւնը նետել ժողովրդին և յեղափոխութեան վրայ»։

—

Վանի եւ Էրզրումի դէպքերուն առթիւ, հետեւեալ բողոքը ուղարկած է եւրոպական մամուլին.

«Ընդդիմադիր թիւրք կուսակցութիւնները զայրոյթով կը բողոքեն Օսմանեան կայսրութեան զանազան նահանգներում, գլխաւորաբար Վանի մէջ, գործուած գազանութիւններուն դէմ և այն չարչարանքներու դէմ, որոնց Էրզրումի բանտերուն մէջ ենթակայ են թիւրքերը և հայերը, որոնք ներկայացուցչական ըէժիմ կը պահանջեն»։

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱԿԵՆԴՐՈՆԱՑՄԱՆ ՕՍՄ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ՕՍՄ. ԿՕՄԻՏԷ

—

Եւրոպական աղբիւրներէ։

Պոլիս 11 փետր.—Վանէն եկած հեռագրներ կը հաղորդեն որ Հայոց եկեղեցիին մէջ մեծ քանակութիւնով անդուկներ գտած են, որոնք կը պարունակէին հրացաններ, փամփուշտ և ուժանակ։ Հայ յեղափոխականները յարձակեցան անդուկները կրող զինուորներուն վրայ, և բուռն կռիւ տեղի ունեցաւ. այդ միջոցին, զինուորները ուժանակը պայթեցնելով ամբողջ հայկական թաղը օդը ելած է։ Կըսւի թէ մեռնողներու թիւը ահագին է։

—

Պոլիս, 12 փետր.—Մուշի մէջ յեղափոխութիւն ծագած ըլլալու լուրը չէ ճշդուած։

Վանի հիւպատոսներու հեռագիրներուն նայելով Հայու մը մատնութեան վրայ երկու օր շարունակ խուզարկութիւններ կատարուած են եկեղեցիին, ինչպէս նաև տուներուն և պարտէզներուն մէջ։ Գտած են 37 անդուկ, որոնք կը պարունակէին 300 հրացան, 300,000 փամփուշտ և ուժանակ։

Ըստ հիւպատոսներու տեղեկութեանց, Հայ յեղափոխականները կրակ բրին մատնիչը սպաննելու համար որ զօրքերուն կընկերանար։

Թրքական աղբիւրներու նայելով յեղափոխականները պատուհաններէ գնդակ արձակեցին զինուորներուն վրայ և անոնցմէ սպաննեցին կամ վիրաւորեցին 11 զինուոր։

Հիւպատոսներու տեղեկագրերը խօսք չեն ըներ ուժանակի պայթումի մասին, որ թերևս յետոյ տեղի ունեցած ըլլայ։

Ուրիշ մանրամասնութիւն չը կայ։ Զէնքի մթերքը հաւանօրէն պիտի ծառայեր սեէ կարևոր ձեռնարկի մը։

—

Պոլիս, 18 փետր.—Վանէն հիւպատոսական աղբիւրէ եկած լուրերու համաձայն անդորրութիւնը կատարեալ է քաղաքին մէջ։ Դէպքը որուն մասին այնքան աղմուկ հանեցին, շատ չափազանցուած է։

—

„Թան“ լրագիրը փետր. 22-ի առաջնորդողի մը մէջ, որ կիսապաշտօնական բնաւորութիւն ունի, հետևեալը կը գրէ։

„Հայաստանի մէջ կացութիւնը շատ լաւ չէ։ Հայերու, երիտասարդ Թիւրքերու և քրդերու մէջ կռիւը կը շարունակուի։ Վանի մէջ տիրող դժգոհութիւնը, որ վերջերս վալիի սպաննութեան պատճառ եղաւ, իր սաստկութիւնը չէ կորսնցուցած։ Թիւրքերը ևս մասնակից են այդ դժգոհութեան, որոնք կամբաստանուին թէ հայերուն միացած են։ Քանի մ'օր առաջ իշխանութիւնները մասնիչի մը լրտեսութիւնով և առաջնորդութիւնով, քաղաքին շրջակայ մէկ պարտիզին մէջ գրաւեցին 300 հրացան և մեծաքանակ պայթուցիկ։ Հայ յեղափոխականները ուզեցին սպաննել մատնիչը որ զիրենք բերան կուտար, և զօրքերուն հետ ընդհարում ունենալով սպաննեցին 18 զինուոր և վիրաւորեցին շատեր։ Կարելի է կացութեան ընդհանուր լաւացումի նշան համարել որ այս ծանր դէպքէն յետոյ խաղաղ և հանդարտ ժողովուրդը պաշիպօզուքներու վրէժխնդրութենէն նեղութիւն չէ կրած“։

—

Վերջի պանուն ստացանք հետեւեալը Մուէն։

ՄՈՒՇ, յունուար 10

Տարօնի ժողովուրդը պարտքի տակ խեղդուած՝ կը դաղթէ Վան, Կարին, Տիարպէքիր, Բաղէշ, թողնելով իր շէնաւեր օճախը։ Օսմանեան բէժիմի սպաննիչ շղթայի ամենանեղ օղակը Տարօնի վզին է ոլորած, կառավարութիւնը տնօրէն է և հարստահարիչ, տեղին ժողովուրդը վայրագ և կատաղի։

Այստեղ ժողովուրդ, բայց, վաստակաւոր, աշխատող հայն է միայն, իսկ քիւրդերը, աղքատն ալ հարուստն ալ ազա են, բէկ են, անոնք են վայելողները, տէրերը, իսկ թիւրքերը պաշտօնեաներ, կառավարիչներ և բոլորն ալ խանէտան են։

Մուշի դաշտի մէջ ահ ու սարսափը կը թագաւորէ։

Ղասրմ բէկ՝ որուն ընդհարումը պատմած էինք թիւրքերու հետ, մեր ընկերներու դէմ ահռելի ու աննեելի դաւաճանութիւն մը գործեց որը անպատիժ չմնար անշուշտ։ Այդ նամերտ բէկին դաւաճանութիւնով նահատակուած են մեր երեք կորիճ ընկերները Շամի փրօփականդիստ Ճահիլ Զաւէնը, խմբապետ Սայտո, սուրհանդակ Ճադօն։ Կառավարութիւնը անոնց դիակները լուսանկարելէ յետոյ հրամայեր է թաղել Գուրդէնի և Գէորգ Զավուշի գերեզմաններուն մօտիկ։

Ղասրմ բէկը յայտնի Մուսա բէկի եղբայրն է և Տարօնի ամենաբարբարոս և կեղեքիչ յեղերէն։ Սա Գէորգ Զավուշի զինակիցն է եղած, վերջերս կառավարութեան դէմ դուրս եկաւ և իր գիւղը ռմբակոծուեց, իսկ ինքը 50—60 հոգիէ խմբի մը գլուխ անցած կը շրջեր շրջակայ քրդաբնակ գիւղերը և կը կազմակերպէր կառավարութեան դէմ։

Այս երկու երեսէն մարդը, որու քաջութեան ինչպէս կերևի, անմիջապէս սահմանակից է նենգամտութիւնը, ժամանակին ուզել էր Գէորգն ալ դաւաճանել, բայց սա շուտ կռահել էր և երեսին տալով բէկին իր նենգամտութիւնը, ոպառնացեր էր։ Ասոր վրայ ի նշան հաւատերմութեան քիւրդ բէկը իր կնոջ բաճկոնը կընծայէ Գէորգին, ուրկէ յետոյ, ըստ ընկերներու, շատ եռանդուն և անձնուէր աշխատանք է ցոյց տուած, այնպէս որ քիւրդ գիւղացիութեան մէջ բաւական ոգևորութիւն առաջ բերած էր։

Հայ հերոսներու մահը ընդհանուր ցաւ է պատճառել նոյնիսկ թիւրք և քիւրդ զինուորականութեան մէջ, իսկ Ղասրմի դաւաճանութիւնը ընդհանուր զզուանք և ամօթ իր տղամարդութեան։

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Փետրուար 14—Կարինի մէջ վերջի յեղափոխական շարժումներու հետևանքով ձերբակալուած թիւրքերու դատավարութիւնը վերջացած է։ Դատապարտուած են 8 հոգի մահուան, 18 մարդ մշանջենական բանտարկութեան, 14 ը տասը տարուայ բանտարկութեան որոնց մէջ է Կովկասէն եկող չերքէզ Ալի էֆէնտին, 1-ը հինգ տարուայ, 3-ը երեք տարուայ, 14 մէկ տարուայ և երկու անչափահաս պատանիներ 6—8 ամսուայ բանտարկութեան։ 19 հոգի անպարտ արձակուած են։

—

Մինչև 1907-ի վերջը Մակեդոնիոյ մէջ գոյութիւն ունեցած են 110 գործող հրոսախումբ, ընդամենը 1200 հոգի։ Անոնց հարիւրին 54-ը պուլկար, 30-ը յոյն, 15-ը սերպ եղած են։

—

Ցարը վախենում է Իտալիա գնալ... Եւ միանգամայն իրաւացի է նրա երկիւղը։ Իտալական սոցիալիստները վաղուց յայտարարել են, որ իրենք ևս պատշաճաւոր ընդունելութիւն կ'անեն Ռուսաստանի միապետին։ „Avanti“!, սոցիալիստների կենտրոնական օրգանը, գրել էր քիչ առաջ հետևեալը.

„Թո՞ղ թագակիր պարոնները գնան համբուրեն, ուր որ կուզեն,—Իտալիայից դուրս, բայց երբէք Իտալիայում։ Գարիբալդիի հայրենիքը երբէք չի թոյլ տայ, որ այնտեղ ոտք կոխէ ժողովուրդների դահիճ՝ ռուսական բռնապետը“...

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ՏԵՐՐՕՐ

Ատենէ մը ի վեր յայտնի լրտեսութեամբ պարապող և անընդհատ այս նպատակով Պուլկարիայէն Պոլիս ու Պոլսէն Պուլկարիա երթևեկող Յակոբ Չէրչեան անուն քնիկ Ֆիլիպեցի հայը, գործակալ՝ ոստիկանութեան պետ Վասրֆ փաշայի և յանցագործ՝ իր մատնութիւններով ու լրտեսական տենդոտ գործունէութեամբ՝

Մահուան դատապարտեցաւ մեր որոշումով և վճիռը գործադրեցաւ Փիլիպէի մէջ 1907 հոկտ. 4 | 17-ին։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՊՕԼՍՈՅ ՄԱՐՄԻՆ

ՆԻՒԱՏԻՊԻԹԻՒՆ

Արեւմտեան Պիւրօն ստացած է՝

Զուիցերիա.—Նէր մլիոնայազորդ Դրիզորէն 5 ֆր.: Բէրն Ա. Աւեսիսեանէն 10 ֆ.:

Ֆրանսիա.—Պարիզի Դաւն. Մարմինը ստացեր է նոր X.Լ.Ն 200 ֆրանկ:

Գումար 215 ֆր.:

Պոլսոյ Հեղիր. Կոմիտէ՝

ՓԻԼԻՊԷԻ ԿՕՄԻՏԷ.—907 մայիսէն մինչև դեկտ. 31: Հեռեւեալ խմբերից՝ Գայանրգի Անձնուրաց 34, եւս 39, Պորիսովկրուտի Շնորհեան ա) տասնեակ 56. եւս 29, եւս 24, Շնորհեան բ) տասնեակ 33, եւս 56, Սբարա Զակորայի Պետրոս Ագիզամ խ. 100, Թաքար Բազարճի Ֆէդայի 22, 50, Խաս-Գէօյի Գէորգ Զաւուշ 18, Մօսէլօվոյի Առիւծ 27, Փիլիպէի Տերոր 29, եւս 29, Վրէժի ա) տասնեակ 41, եւս 46, եւս 14, Վարդէս 25, Արեւելեան 29, Վասպուրական 55, եւս 34, Բրիսափոր Միքայէլեան 44, եւս 30, Հեթում Դազիկ 54, եւս 51, եւս 39, Հայր 67, Վազգէն 60, եւս 30, Բաբկէն-Սիւնի 54, Տարօն 30, 50 եւս 24, Ապիլ Թաքուլ 1906-ի հաշիւ 95. Արամեան խ. ինն հաշիւ 80. 50, Օր. Սօսի Այծեամ 13. 50, եւս 10. 50, Օր. Կարմիր խաչի բ) տասնեակ 16. 50, եւս 15, գ) Տասնեակ 9, դ) Տասնեակ 22, Արարատ սրճարանի զանձարանէն 32. Ե. Ա-ի ճանապարհորդական եւ հարսանիքի առթիւ հանգանակուած 49. 20: Հանգանակութիւն 1907էն մնացած—№ 18662՝ 20, № 18669՝ 20, 18675՝ 20, 19139՝ 20, 19137՝ 10, 19114՝ 40 ֆր.: Գումար 1697 ֆր. 20 սանթ.:

ՌՈՒՍԶՈՒԿԻ ԿՕՄԻՏԷ.—Հեռեւեալ խմբերից՝ Ռաւօ 16 լիվ, եւս 23, եւս 12, եւս 6, Սիփան 26, եւս 22, Մանուկեան 70, եւս 38, եւս 18, Բաբկէն-Սիւնի 6, եւս 25, եւս 27, Վրէժ 42, եւս 39, Հայր 5, եւս 13, եւս 31, Շամէ 43. 50, եւս 31. 50, Թաքուլ 16. 50, եւս 13, Կարմիր խաչի Արշալոյս 46, Կարմիր խաչի Մարօ 53. 50, Գուրապէի Վարազայ 95, եւ 38, Ամիրզով Կայծակ 8. 50, եւս 81, եւս 26, Ճուրնովայի Մոկուն 12, եւս 11, Թրնովայի Վազգ 30, Սամսվիդէն հին հաշիւ 73, Նէր Ս-էն 5, „Դրօշակի" բաժնեգիններէ 100 եւս 48. ծախսած գրքերէ 40, Կարմիր խաչի Մարօ խ. 20 լիվ: Գումար 1210.50 լիվ:

ՍԼԻՎԼԷՆԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷ.—Հեռեւեալ խմբերէն՝ Բասէն Մանլէի Ազատ 88 ֆր. եւս 46, Հայր 40, եւս 41, Սերոբ Փաշա 40, Պեսօ 64. 50, եւս 70, Գանձանակէն 44. Հայր 42, Եամպոլիի Կայծակ 33, եւս 28, եւս 30, Գարնապաթի Հայր 61, Սբրալնայի Արաբօ 22, Սերոփ փաշա 20, եւս 9, Բէրմէնլիի 28. 20, Սլիվէնի Անդրանիկ 21, եւս 15, եւս 27. Բրիսափոր 27, եւս 40, Վասպուրական 15, Սիրէմնեան 46, 60, Հայր խ. գանձանակէն 40, Գարաբուճարի Սերոբ փաշա խ. 1906-էն մնացած 22, 1907-ի հաշիւ 38, Նէրներ՝ Ս. Թ. 7, Ս. Ա 6, Գումար 1011 ֆր. 30 սանթ.:

ԿԱԼԱՅԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—381 ֆր. խումբերու սմսավճար:

ԴԱՆՈՒԲ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—Յուլիս, օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներու՝ X Սրճարանի հասոյթ 63 ֆր., Տիկն. Կարմիր խաչի գանձանակէն 96, հեռեւեալ խմբերէն՝ Նէմրութ 21, Վարազ 28, Նոր Դար 42, Սեպուհ 19, Կարին 28, Ֆէդայի 30, Սերոբ Ադրիւ 24, Հազուլ 21, Արարատ 36, Զինասէր 27, Նէրներ՝ Պողպատէ 5, Դաշտէ 10, Ազատական 5, Ազիզէ 5, Վեցնարտածէ 5, Վարդանէն մնացած 9, Միզօլի 1905 յունուարէն օգոստոս՝ 7, ծախսած պատկերներէ 5, Հանգանակութիւն՝ Նիկողոս Խաչիկեան 5, Խեպօ Մարկոս 5, Եղիազար Պշար 5, Ասսուր Վարդան 5, Մանասէ Յարութիւն 2, Վարդան Օհանէս 5, Յակոբ Մխիթար 3. Մուրաս Շանպազ 3, Աւետիս Աբրահամ 5, Պօղոս Խոսիդեան 5, Կարապետ Մարտիրոս 5, Պօղոս Մուրաս 5, Աւետիս Մարկոս 5, Մկրտիչ Կարապետ 5, Խեպօ Բարսեղ 5, Յակոբ Մուրաս 5, Աւետիս Ասատուր 4, Գէորգ Շ. 10, Խոսրեղ Յակոբ 5, Սարգիս Աւետիս 2, Դազար Սեւօեան 5, Յովհաննէս ադոսեան 4, Գրիգոր Դալուս 5, Պետրոս Յարութիւն 2, Յովհաննէս Մուրաս 2, Մուրաս Պապիկ 3, Աւետիս Յարութիւն 25, Խոսրեղ Նիկողոս 5, Մարտիրոս Եզօ 2, Մուրաս Գրիգոր 2, Մուրաս Խոսրեղ 2, Գզրայէլ Յակոբ 5 ֆր., Երանոս Մուշեղ 5, Արքին Գրիգոր 5, Սարգիս Արամ 2, Աբրահամ Կիրակոս 1, Յակոբ Կիրակոս 2, Յովհաննէս Մարգար 1, Արշակ Զատիկ 2, Թորոս Մկրտիչ 4, Ռուբէն հայրապետ 1. 50, Մուշեղ Մարգար 5, Վարդան Սահակ 5, Սիսոյ Յակոբ 5, Դազար Մուրաս 3, Կարապետ Խոսրեղ 5, Սարգիս Մանուկ 5, Նիկողոս Մուրաս 5, Օհանէս Գալուստ 3, Գալուստ Արքին 2. Սարգիս Գասպար 2, Մարգար Մանուկ 2, Պօղոս Օհանէս 4, Սահակ Յարութիւն 5, Սերոբ Սաքար 5, Մանուկ Խարզիք 3, Սարգիս Եղիազար 3, Գրիգոր Վարդան 5, Խաչիկ Յակոբ 2, Ստեփան Մարկոս 2, Վարդան Մարտիրոս 2, Վարդան Օհանէս 2, Դաղօ Գիւրանից 2, Մանուկ Յակոբ 20, Ստեփան Մարկոս 5, Յակոբ Շահին 5, Մարգար Մանուկ 2, Վարդան Շահէն 4, Խաչիկ Պօղոս 4, Դազար Մինաս 4, Գասպար Զաքար 7, Օհանէս Մազուս 3, Մուրաս Օհանէս 5, Արդին Տօնօեան 1, Մինաս Խոսրեղ 5, Գրիգոր Խոսրեղ 5, Նշան Ասատուր 2, Ասատուր Եղիազար 2, Գրիգոր Յակոբ 5, Կարապետ Մանուկ 5, Ներսէս Սարգիս 1, Յովակիմ Յարութիւն 5, Յովհաննէս Մաթոս 2, Յովհաննէս Մանուկ 2, Խաչիկ Օհանէս 5, Մարտիրոս Սարգիս 2, Մանուկ Տ. Մանուէլ 5. Մամբրէ Ասատուր 2, Մուրաս Սէմէր 1, Մկրտիչ Կարապետ 1, Մարտիրոս Սէմէր 5, Վարդան Մուրաս 60 սանթիմ, Խաչիկ Կարապետ 1, Մահտեսի Մարգար Մանուկ 50 ս. Մուրաս Մինաս 50 ս., Յովհաննէս Եղիազար 1, Սողպիկ Օհանէս 2, Օհանէս Խաչիկ 3, Աւետիս Սահակ 3, Մամբրէ Եղիազար 2, Պաղտասար Յարութիւն 2, Եղօ Խոսրեղ 2, Յակոբ Յովհաննէս 3, Խեպօ-Խաչիկ 10, Տիկին Զարդիկ Պապիկ 1, Տիկ. Զապէլ Պապիկ 1, Կարապետ Յակոբ 5, Գասպար Առամել 2, Ստեփան Սարգիս 2, Յովսէփ Խոսրեղ 5, Տիկ. Մարուսի Թէրզեան 1, Եսայի Թորոս 5, Տիկ. Երանիկ Պօղոս 2, Սարգիս Բարսեղ 5, Ստեփան Կարապետ 5, Պաղդասար Ստեփան 1, Դազար Մարգար 2, Համբարձում Յովհաննէս 1, Տիկին Աղաւնի Շահէն 2, Պատանի Գէորգ 1, Դաւիթ Խաչիկ 5. Պատանի Պետրոս Օհանէս 1, Տիկին Ֆիլիկ Հայրապետ 1, Արքին Տօդրամանեան 5, Մանուկ Բալպեան 2, Աւետիս Սահակ 2, Կարապետ Պօղոս 10, Սարգիս Աւետիս 2. Մարտիրոս Անդրէաս 5, Դազար Զաքար 5, Արքին Խոսրեղ 2. Միքայէլ Էմմէրենան 1, Խաչիկ Թովմաս 2, Գասպար Խաչատուր 4. Ոսկի Գաբլան 3, ակոբ Ոսկերիչ 1, Գալուստ Կարապետ 2, Օհանէս Տէրտէր 1, Պ Ցրվան 2, այլեւայլներէ 90 ֆր.: Գումար 986 ֆր..

ԲՈՆԹԱՆՅԱՅԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷ.—Տուգանքներ Զալմայէ 5, Հայրէ 5, Նէմրութէ 5. հեռեւեալ խմբերէ Անդրանիկ 40, Ազատ 98, Զորս գանձ 48· Ղեւոնդեան 78, Վազգէն 16, Դեւեան 40. 50. Սերոբ 89. 30, Կարմիր խաչ 40, Մ.՝ Գիւղամաղամէն 58, X 48, Հասոյթ 865 ֆր. „Դրօշակի" բաժնեգին 94 ֆր.:

1907 Յուլիսէն մինչեւ 1908 Յունուար 31: Հեռեւեալ խմբերէն՝ Դաղիկ 38 ֆրանք, Դեւեան 24, Զաւուշ 39, Ղեւոնդեան 76, Սերոբ 91, Անդրանիկ 121. Վազգէն 13, Եփրաս 162, Աւուար 90, Զորս Գանձ, 49. Սրճարանի հասոյթ 333: Գումար 2565 ֆր. եւ 80 սանթ.:

Ընդհանուր գումար 7470 ֆր. 80 սանթիմ:

Ամերիկայի Հեղիր. Կոմիտէն՝

1907 տարւոյ երջանին մէջ: Փրավիդենսի կոմիտէն 1250 դոլար Թրոյի 960. 77, Նիւեորքի 816, 46, Շիքակոյի 704, Իսթ Սէյնթ Լուիզի 676. 15, Ֆրէզնոյի 675, Լինի 656, Տիթրոյթի 650, Պրէնթվրսի 600, Ուեսթ Փուլմրնի 540, Ուօրեկրնի 490, Փորթլընտի 490, Կրէնիք Սիթիի 875, Հէմիլթրնի 850, Նիւարիփորթի 800, Թրոյի Տիկնանց 800, Պոսթրնի 275, Լօրէնսի 235, Հուայթնզվիլ 257. 50, Փէթրսրնի 250, Նիւ Պրիթրնի 230, Ֆիլատէլֆիայի 200, Լուսէլի 200, Ռիչմրնտ 194. 32, Ուօթրբուրի 171, Պրվլօն 159. 50, Նէուէի 155, Սէնթրլ Ֆոլզ 150, Զլլսի 137, Հէյվրհիլի 134, Կոլթի 125, Ուեսթ Հոպքրնի 116. 44, Պրաֆթրնի 100, Նիւեորք Տիկնանց 70, Բրնօքլայի 60, Պրէնթվրտի Տիկնանց 50, Ֆիլատէլֆիայի Տիկն. 50. Միլվրտի 45, Բանքրտի 45, Կրէնս Բէվիզի 43, Նիւ Հէյվրնի 40, Նորֆոլ 40, Ուրնսաֆէթի 20. 65, Տօվրի 16. 85: Գումար 13343 դոլար 24 սէնթ:

Տ.-ի Ենթակոմիտէն՝

Ստացած է մինչեւ 1908 յունուար 1: Հեռեւեալ խմբերէն՝ Վարազ 2384 դրշ., 30 փար. Կարկուս 455. 10, Մրրիկ 125: Գումար 2965 դրշ.:

Մեր ընթերցողներէն եւ ընկերներէն վերջնականապէս կը խնդրուի վերանորոգել անյապաղ իրենց հասցէները, պարզ և որոշ գրուած, եթէ կը ցանկան կանոնաւոր ստանալ «Դրօշակի» համարները։